

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

ԵՎ XIX Դ.60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌՈՒՍ ԱՌԱՋԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Ա Բ ԿԱՐԻՆՅԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

А. Б. ҚАРИНЯН

МИКАЭЛ НАЛБАНДЯН
И
ПЕРЕДОВЫЕ РУССКИЕ ДЕЯТЕЛИ
60 гг. XIX ВЕКА
(Статьи)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1979

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ
ԵՎ
XIX Դ. 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈՌԻՍ ԱՌԱՋԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ
(Հոդվածներ)

A $\frac{1}{15601}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

Տ.Ար1 ինդեքս ԳՄԴ ՏՅ.3 Հալ 1

ն 19 կ

Կարինյան, Ա. Ռ.

Միֆայել Նալբանդյանը և XIX դ. 60-ական թվականների առաջին տարիները: (Հոլովածներ).— Նր.:

ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979.— 119 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Ռ. Կարինյանի տարրեր ժամանակներում զբաղվածները հայ մեծ հեղափոխական-ղեկավար Մ. Նալբանդյանի զաղափարական ստեղծությունների, հասարակական-քաղաքական և տնտեսագիտական հայացքների մասին:

Գրքույկը նախատեսված է ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար:

Ժողովածուն տպագրության պատրաստեց, խմբագրեց, ստաշաբանը և ձևադրագրությունները գրեց բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԹՅԱՆԸ

4603000000

1703 /02;—79

© ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, 1979

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂԱԽԻՑ

Ներկա ժողովածուն ամփոփում է սովետահայ ականա-
վոր գրականագետ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի իս-
կական անդամ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Արտա-
շես Կարինյանի՝ հայ մեծ հեղափոխական-գեմոկրատ Միքայել
Նալբանդյանի կյանքին ու դադափարական առնչություններին
նվիրված աշխատությունների ընտրանին։ Այդ հոգւածները
լույս են տեսել գրական, գիտական և կուսակցական մամուլի
էջերում՝ 1920-ական թվականներից սկսած։

Նյութերի ընտրությունը կատարված է հեղինակի համա-
ձայնությանմբ և այն ծրագրով, որ ընթերցողը հնարավորու-
թյուն ունենա ճիշտ պատկերացում կազմելու Նալբանդյանի
դադափարական աճի, գրական-հասարակական հայացքների
դարգացման ընթացքի և քաղաքական կապերի մասին, ինչ-
պես նաև կարողանա հետևել գիտնականի Նալբանդյանական
բմբռնումների ընթացքին՝ նրա հիմնավորած տեսակետներին
և լուսաբանած խնդիրներին։

Միքայել Նալբանդյանը Ա. Կարինյանի գրական-գիտա-
կան հետաքրքրությունների տեսագլուշտում է եղել 1910-ական
թվականների սկզբներից, ավելի քան 60 տարի։ Պետերբուրգի
համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ,
հրիտասարդ մարքսիստ Կարինյանը հրապարակային դասա-

խոսուելուն է կարդում Նալբանդյանի տնտեսական ու քաղաքական հայացքների մասին, շաբաթօրթն ունենալով բանասեր Ե. Պալյանի «Միքայել Նալբանդյանի տնտեսական թևերիան» աշխատությունը (Բաքու, 1911):

Հոկտեմբերի հաղթանակից հետո, Ա. Կարինյանը՝ առաջինը սովետահայ նալբանդյանագետներից, թույլտվություն է ստանում ծանոթանալու մեծ հեղափոխական-ղեմոկրատի սենատական ցուցմունքներին և դատական գործին, խորամուկ լինում նրա և ուսս 60-ականների զաղափարական-քաղաքական կապերի առարկայական ապացույցների մեջ: Դրա արդյունքը «Քաղվածքներ սենատական գործից» հոգված-հրապարակումն է («Պայքար», գրական շաբաթաթերթ, հավելված «Խորհրդային Հայաստանի», Երևան, 1923, № 12—13), որը դիտական շրջանառության մեջ էր դնում Նալբանդյանի պրական ժառանգության անծանոթ էջեր: Նյութերն այնքան զայթակղիչ ու մեծարժեք էին, որ նրանց լույսի տակ էլ հետադյուրմ բնթացավ Կարինյանի հետադոտական գործունեության՝ Մ. Նալբանդյանի անձի, կապերի ու հայացքների լուսաբանության բաժինը:

1924 թ. հունվարին Ա. Կարինյանը հանդես է գալիս հրապարակային նոր դասախոսությամբ՝ Նալբանդյանի հասարակական ու տնտեսական հայացքների մասին (համառոտ շարադրանքը տե՛ս «Մարտակոչ», 1924, № 2), իսկ շորս տարի անց հրապարակ է հանում «Միքայել Նալբանդյան» ուսումնասիրությունը (տե՛ս «Դեմքեր և դեպքեր» (քննական ակնարկներ), Երևան, 1928, էջ 53—137): Մեկ տարի անց Կարինյանը տպագրում է Նալբանդյանին նվիրված նոր հոգվածաշարք («Պրոլետար» օրաթերթ, 1929, մայիսի 19, 23, 24, 29, «Դրական շաբաթ», 1929, № 42—43, էջ 753—4), այս ան-

գամ գիտական շրջանառության մեջ դնելով անտիպ վավերագրեր էնֆիաճյանցների ընտանեկան գիվանից: 1940—50-ական թվականներին Կարինյանը վերսկսում է իր նալբանդանագիտական հետազոտությունները և հրապարակ հանում «Նալբանդանը Արևմուտքի ռեակցիայի մասին» («Սովետական Հայաստան», 1949, նոյեմբերի 10), «Ռուս հեղափոխական-գեմոկրատների զինակիցը» («Կոմունիստ», Բաքու, 1954, № 235) հոդվածները և «Միքայել Նալբանդանը և XIX դարի 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները» գրքույկը (1949): Դեռևս 1929-ին տպագրված «Միքայել Նալբանդան» ռուսերեն հոդվածը «На рубеже Востока» ամսագրում և 1954-ի «Միքայել Նալբանդան» ակնարկը («Պարտիական կյանք», № 11) այդ տասնամյակների նրա հետազոտությունների յուրօրինակ ամփոփումներն են:

Այսօրվա հայեցակետից և Մ. Նալբանդանի անձի ու գործի մասին ստեղծված գիտության նվաճումներից կլնելով՝ մասնավորապես 1929 թ. լույս տեսած «Միքայել Նալբանդանի մասին» հոդվածաշարում, ինչ-ինչ սրբազրույթուններ ու լրացումներ թիրևս կարելի լինեի անել, բայց դրանով ճշտորեն չէի ներկայացվի Նալբանդանի դրական ժառանգության հետազոտողի այդ տարիների շահախնդրություններն ու պաշտպանած գրույթները: Կարինյանի հոդվածաշարը, անգամ այդ վիճակում, լուրջ առաջընթաց էր Նալբանդանի աշխարհայացքի և հասարակական-քաղաքական շրջապատի լուսաբանման ու վերադնահատման համար: Կարինյանի այս և մյուս աշխատությունները դալիս էին հաստատելու, որ Նոր Նախիջևանի միջավայրում ձևավորված երթմնի դալիը այլևս մենավոր գործիչ չէր ու ո՛չ էլ ազգային լիբերալ, այլ նշանավոր հեղափոխական, ռուս 60-ականների պայքարին զին-

վորագրված գործիչ, որը լուսավորական կամ հյուսիսա-
փայլյան քմբունումների ոլորտից համարձակորեն անցում էր
կատարել դեպի հեղափոխական դեմոկրատիզմ ու մարտնչող
մատերիալիզմ, մինչև վերջ, սակայն, չկարողանալով ձերբա-
ղատվել որոշ հակասություններից, որոնք նկատելի են Նալ-
բանդյանի մասնավորապես տնտեսագիտական հայացքների
մեջ:

Հրատարակվող հոդվածներում նկատվում են ինչ-ինչ
կրկնություններ ևս, բայց մենք որոշեցինք պահպանել նրանց
ամբողջականությունը և հրապարակ հանել այնպես, ինչպես
ուղագրվել են սովետահայ մամուլում, իբրև հեղինակի տար-
բեր ժամանակների հայացքների արտացոլանքների:

Հոդվածների բնագիրը տպագրության պատրաստելիս ամե-
նուր կանոնավորել ենք կետագրությունը, հնարավորին չափ
ճշտել մեջբերումները, օտարել վրիպակները, իսկ մինչև
1940 թ. հրատարակվածների ուղղագրությունը վերածել ար-
դիականի:

Կարծում ենք, որ մեր դիտական հասարակայնությունը
շնորհակալությամբ կընդունի ավագագույն հայ դրականա-
դատի հոդվածների սույն վերահրատարակությունը:

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ XIX Դ. 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌՈՒՍ ԱՌԱՋԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Լենինգրադում, նեաշի ափին է կառուցված Պետրոպոլիսի մարտիրոսացիների հետ է կապված Ալեքսեյան Ռավելինը, որի խոնավ նկուղներում բանտարկվել են 1825 թ. (գեկաբրիստների ապստամբություն) մինչև 1866 թ. հեղափոխական 149 գործիչներ (կալանավորների ցուցակը հրապարակել է ցարական բանտերի պատմաբան պրոֆ. Գերնետը)։

1825 թ. Ռավելինի նկուղներն են նետվել Պետեղը, Ռիլեը, Բեստուժեր, Մուրավյով-Ապոստոլը, Կախովսկին՝ կախաղան հանված գեկաբրիստները։ Հետագա շրջանում բանտարկվում են Պետրաշևսկին, Կարակոլովը, Իշուտինը, հայտնի գրող Շելլունովը և շատ ուրիշ գործիչներ։ 1862 թ. ցարական ժանդարմները ամրոց են բերում նալբանդյանին։

Ալեքսեյան Ռավելինի պատմաբանը այսպես է բնութագրում կալանավորների կացությունը. «Ամենազաղանի այդ բանտը նետվելու և բանտից ազատվելու համար անհրաժեշտ էր ցարի հատուկ կարգադրությունը։ Միայն բերդի պարետը, ժանդարմների պետը և ապա՝ հրրոդ բաժանմունքի կառավարիչն իրավունք ունեին մտնել ամրոց ու բանտ։ Երբ բանտարկյալը մեռնում էր, կես գիշերին նրա դիակը դուրս էին տանում այնպես, որ ոչ ոք չիմանա, թե Ռավելինի նկուղնե-

րում բանտարկված են կալանավորներ...»։ Դաժան այդ բանտից կալանավորները սովորաբար «աղատվում» էին մեռնելու կամ աքսորավայրերում տառապելու համար։

Բանտը հյուծում է նալբանդյանին, և նա հիվանդ վիճակում աքսորվում է ու շորս ամսից հետո մահանում աքսորավայրում։

Նալբանդյանը հարազատ ժողովրդի դատը ձգտել է շաղկապել հին կարգերի դեմ ուղղված ժողովրդական—հեղափոխական շարժումների հետ։ Հեղափոխական գաղափարները նրա համար նվիրական պատգամներ էին։

Ձինված ուս հեղափոխական դեմոկրատների առաջավոր գաղափարներով՝ նա ստեղծում է ուրույն հոսանք հայ իրականության մեջ։ Ընկնում է պայքարի ճամփին, առաջին զիրքերում, մինչև կյանքի վերջին օրերը գրիչ-սուրբ ձեռքին...

1

Միքայել Նալբանդյանը ծնվել է Նոր Նախիջևանում, 1829 թ. նոյեմբերի 2-ին (ն. տ. 14-ին)։ Նրա հայրը արհեստավոր էր։ Նախնական կրթությունը Նալբանդյանն ստանում է հայրենի քաղաքում և արդեն պատանեկության տարիներին աչքի է ընկնում իր արտասովոր ընդունակություններով։ Որպես հոգևորական, Նալբանդյանը պարտավոր էր յուրացնել ամենից առաջ կրոնական դիտելիքները։ Սակայն նորնախիջևանցիները կապված էին թե՛ մոտեւկա Ռոստովի, թե՛ հարավային Ռոսաստանի ուրիշ վայրերի ուս բնակչության հետ։ Ռուսերեն լեզուն, իսկ պրասեր հայերը նաև ուս գրականությունը, հնարավորություն ունեին ուսումնասիրել հենց Նախիջևանում։ Տակավին պատանեկության տարիներին՝

Նալբանդյանը փոխադրել է ռուս հայտնի ազատախոհ գրող Կանտեմիրի բանաստեղծությունը: Այդ թարգմանությունը լույս է տեսել 50-ական թվականներին՝ Գ. Պատկանյանի «Արարատ» շաբաթաթերթի էջերում:

Նոր Նախիջևանի հայկական համայնքը միատարր զանգված չէր: Քաղաքը շրջապատված էր հայաբնակ գյուղերով, որոնց աշխատավոր բնակչությունը հաճախ ընդհարվում էր մեծահարուստ աղաների հետ: Այդ վաճառական-աղաներին թշնամաբար էր տրամադրված քաղաքի չքավորությունը, նրանցից անբավական էին քաղաքի մեծամասնությունը կազմող արհեստավորները, մանր առևտրականները, կիսաապահով աշխարհական և հոգևոր պաշտոնյաները: Հարուստ աղաների մեջ աչքի ընկնող դիրք էր զբաղում խալիբյանը, որը կապված էր թե՛ ցարական բարձր իշխանության և թե՛ հայ կղերականության բարձր խավի հետ: Խալիբյանը խոշոր առևտրական էր: Կատարում էր առևտրական խոշոր օպերացիաներ, գնում էր էժան գնով ցորեն և ապա սովի ժամանակ սպեկուլյատիվ գներով վաճառում: Նրա շուրջը խմբված հարուստ վերնախավի ներկայացուցիչները աշխատում էին տուրքերի ամբողջ ծանրությունը բարձել արհեստավորների և գյուղացիների ուսերին: Իշխողների, սպորտկենտրոնի աջ խումբը աշխատում էր ղեկավար դիրքեր զբաղել քաղաքային մագիստրատի մեջ ու դառնալ հասարակական գոմարների ինքնահեծան տնօրենը: Նոր Նախիջևանի հայ իշխող և տիրապետող խավերը հովանավորվում էին կաթողիկոսի կողմից: Սոցիալ-դասակարգային ներհակությունները և պայքարը նորնախիջևանյան համայնքում եղել է նաև անցյալում: Հայտնի է, որ Հովսեփ Արղունյանի տիրակալության օրերին Նոր Նախիջևանում հանդես են եկել յուրահատուկ ազատախոհ

դործիչներ: Դրանցից մեկը՝ Դերեջանյանը, մտրակահար է արվել և ապա շղթայակապ աքսորվել Սիբիրի Ներշինսկ քաղաքը: Կաթողիկոսը հրահանգել է հետևել սրճարաններում համախմբվող մարդկանց: Սոցիալական ներհակությունները և դասակարգային պայքարը ավելի սուր են դառնում 30—40-ական թվականներին, որոնք և ուժեղ տպավորություն են թողնում պատանի Նալբանդյանի վրա:

Նոր Նախիջևանի հայ տիրապետող շերտերի և խալիբյանի թիկունքին կանգնած էին ցարական ոստիկանները, ցարական պաշտոնակալները, հայ կղերականության ղուլս Ներսես կաթողիկոսը: խալիբյանականների դեմ կուլոշների շարքերում տեսնում ենք արհեստավորների, աշխատավորների, անապահով պաշտոնյաների: Հայ բուրժուական դեմոկրատիայի տակավին անկաղմակերպ խմբակն էր դա, որ փորձ էր անում դեմոկրատացնել մագիստրատը, քաղաքային վարչական օրգանները, եկեղեցական-ծխական հաստատությունները: Նոր Նախիջևանում, իսկ հետագայում նաև Բեսարաբիայում, Նալբանդյանը ուսումնասիրում էր աշխատավորների բողոքներն ու դիմումները հենց առաջնորդարանի գրասենյակում: Որոշ քաղաքացիների օգնելով, նա կազմում կամ գրում է թեմական առաջնորդին ուղղված նամակ-բողոքների: Այդ նամակները առաջնորդի երիտասարդ քարտուղարին կապում են ժողովրդի հետ: Նալբանդյանը աստիճյաամբ է լցվում ղեպի տիրապետողները, հենց ղեպի կաթողիկոսը, որի հետ հետագայում շատ սուր բնդհարում է ունենում:

Նալբանդյանը 1848 թ. օգոստոսի 9-ին հատուկ գրություն է ուղղում արքեպիսկոպոսին, խնդրում է արձակել իրեն ու հայտարարում է. «Չկաբեմ ամենևին մնալ ի հոգևորական կոչման...»:

Ներսես կաթողիկոսի և խալիբյանական «կուսակցության» նախաձեռնությամբ կազմակերպված հետապնդումները ցույց են տալիս, որ Նալբանդյանը այդ շրջանում համարվում էր հակակղերական հոսանքի ուրույն ղեկավար։ Կաթողիկոսը ճիշդ է անում հկեղեցու իրավասությունների և նրան «ամբարտառվան» հրիտասարդին պատասխանատվության ենթարկել ու պատժել։

Նալբանդյանը, իսկյա տալով կաթողիկոսի հետապնդումներին, 1853 թ. ուղևորվում է Մոսկվա և հովանավորություն ունենում կաղարչանների կողմից, որոնք լավ հարաբերության մեջ չէին Ներսես կաթողիկոսի հետ։

Մոսկվայում կաղարչանները սկզբնական շրջանում որոշ սջակցություն են ցույց տալիս Նալբանդյանին։ Նա դառնում է Լաղարչան ճեմարանի հայոց լեզվի դասատու Քիշ հետո՝ 1854 թ. (սեպտեմբերի 2-ին) Նալբանդյանը մտնում է Մոսկվայի համալսարան, նախ՝ որպես աղատ ունկնդիր, իսկ հետագայում՝ բժշկական ֆակուլտետի «օրինական ուսանող»։ Այդ մասին իր եղբորն ուղղված նամակում (1855 թ. փետրվարի 10-ին) նա գրում է. «Առավօտ մինչև երկու ժամը լինում եմ ամեն օր համալսարանումն...»։

Մոսկվայի համալսարանում Նալբանդյանն ուսումնասիրում է ամենից առաջ բնագիտական և բժշկագիտական առարկաները։ Նրա գրադարանում պահված գրքերը ցույց են տալիս, որ նա մեծագույն ուշադրությամբ հետևում էր բնագիտական նորություններին։ Այդ տարիներին ռուս իրականության մեջ բնագիտությունը քննարկվում էր ուրույն հայեցակետով, որպես տեսական գիտական հայեցությունը կազմավորող և կյանքի հեղաշրջման օժանդակող կարևորագույն գործոն։ Գերցհներ իր

մեծաւարձների մեջ բնութագրում է, ի միջի այլոց, խորթ եղբայր Յակովլեին և պատմում նրա դիտական աշխատանքի մասին: Յակովլեի տիպի գործիչները դառնում են 50-ական թվականներին Տուրգենևի համար նոր սերնդի մտայնությունը բնութագրող Բաղարովի յուրահատուկ նախատիպեր: Մոսկվայի համալսարանում Նալբանդյանը լսում է ի միջի այլոց տաղանդավոր բնագետ Ռուլյեի դասախոսությունները: Ռուլյեն նախագարվինյան շրջանի էվոլյուցիոնիստ էր: Նա իրեն հատուկ ձեռքով ժողովրդականացնում էր առաջավոր բնագիտության սկզբունքները: Իր դասախոսությունների մեջ այդ գործիչը կոչ էր անում ուսումնասիրել կոնկրետ առսական միջավայրը, օգտագործել բնագիտությունը գործնական նպատակների համար, վերջապես՝ գիտության միջոցով փոփոխություններ մտցնել բնության մեջ: Ռուլյեի մասին Նալբանդյանը իր եղբորը հիշեցնում է բանտից գրված այն նամակի մեջ (1862 թ. մայիսի 1), ուր կանգ է առնում բնագիտության գործնական նշանակության վրա, քննադատում միակողմանի արհեստավոր-բժիշկներին և շեշտում, որ «կենդանիների և բույսերի օղբնտելացումը մարդկային կենցաղի բարելավման նոր աղբյուր է...»: Ռուլյեն մեծ ժողովրդականություն էր վայելում թե՛ ուսանողական, թե՛ մտավորական շրջաններում, հատկապես 50-ական թվականներին: Նալբանդյանը ուսանականավոր այդ դիտականի դերը բարձր էր գնահատում... «Ռուլյեն, — գրում է նա, — օղբնտելացման առաջին հիմքը դրեց... որքան կհիշվեր նա՝ տեսնելով իր անխոնջ ջանքերի հսկայական հաջողությունը...»: Բնորոշ է և այն, որ Ռուլյեի մահվան կապակցությամբ Նալբանդյանը հիշում է կենդանիների և բույսերի օղբնտելացման, կարմիր որդանի, խեժի, գլատորաբեր պիծակի կարևորության մասին:

Մոսկվայից Նալբանդյանը մերթ մերթ ուղևորվում էր Պետերբուրգ։ Լազարյան ճեմարան մտնելուց առաջ՝ 1853 թ. ուսուցչի իրավունք ստանալու համար նա հատուկ քննություն է տալիս Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում։ 1855 թ. Նալբանդյանը նորից ուղևորվում է Պետերբուրգ՝ հատկապես հայկական տղարանի համար տառեր պատվիրելու նպատակով։ Քիչ հետո դառնում է միևնույն Պետերբուրգի համալսարանի օգյատ ունկնդիր։ Նա 1860 թ. (հունիսի 7-ին) այդ համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ, վրաց և թաթարական բաժնում քննություն է տալիս, դիտելուց հետո է ներկայացնում և արժանանում թեկնածուի աստիճանի։

Մոսկվայում և Պետերբուրգում շփվելով առաջավոր ռուս ուսանողության հետ, Նալբանդյանը բնդհուպ մոտենում է ռուս դեմոկրատական հոսանքների առանձին ներկայացուցիչներին։ Նրա մտայնությունը հեղաշրջվում է հենց այդ մտավոր մթնոլորտում։ Այդ փաստը հաստատվում է, հրե ավելի մեծ ուշադրությամբ ենք ուսումնասիրում նրա գրադարանի բոլոր գրքերը։ Բացի հայերեն հրատարակություններից, նշանակալից տեղ են գրավում այդտեղ ռուսերեն հենց այն գրքերը, որոնք այս կամ այն ձևով նշվում էին 50—60-ական թվականներին ռուս-դեմոկրատական մամուլի էջերում։ Նթև ամփոփենք այն տվյալները, որ կան Նալբանդյանի գրությունների ու նամակների մեջ և ապա հաշվի առնենք վերոհիշյալ գրքերի նշանակությունը, մենք կտեսնենք, որ Նալբանդյանը ուսումնասիրում էր հենց այն նյութերը, որոնք հետաքրքրում էին ռուս առաջավոր դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին։ Բոկլ, Գերվինդուս, Շլոսեր, Կոլբ, Լիբիխ, Ռուլյե, Իլիենկով՝ բոլոր այդ գրողները քննարկվում էին որ-

պես կուլտուրական վերելքին օժանդակող գործիչներ: Բանտից գրված նամակների մեջ Նալբանդյանը կանգ է առնում Սերվանտեսի, Մակուլնջի վրա: Իր «Աղցմիթի» մեջ նա տողեր է ընտրում Բայրոնի, Շեքսպիրի, Ռուսսոյի գործերից և որպես էպիգրամներ կցում է իր գործի առանձին մասերին: Գրիբոյեզովի «Խելից պատուհաս» կոմեդիայի ձեռագիր օրինակը պատվավոր տեղ էր գրավում Նալբանդյանի գրադարանի մեջ: Բնորոշ է այն, որ արդեն 1855-ին Նալբանդյանը մեծապես հռչակվում է հայ ուսանողական շրջաններում:

Նալբանդյանը տակավին 1855 թ. որոշ քայլեր էր ձեռնարկել հայերեն հանդեսի հրատարակության գործը դուրս բերելու համար: Այդ հանդեսը պիտի անվանվեր «Հյուսիսայգ»: Հետագայում «Հյուսիսայգը» դառնում է արդեն «Հյուսիսափայլ»: Հիշենք այստեղ այն, որ Գերցենի և Օգարնի նախաձեռնությամբ հիմնված «Հյուսիսային (կամ Բեկոսային) աստղ» հանդեսը զարգարված էր կախաղան հանված դեկարիստների դիմաստովերներով: Հավանականությունն է, որ չէր լինի, եթե մենք 1855 թ. Իսկանդերին ընթերցող Նալբանդյանի նախաձեռնությամբ ծրագրված հանդեսի վերնաորր կապենք գերցենյան 1855 թ. հրապարակված հանդեսի վերնագրի հետ:

«Հյուսիսափայլի» մեջ Նալբանդյանը գրավում է առաջին ու ղեկավար դիրքերից մեկը: Ազդվելով ուս հեղափոխական-դեմոկրատական գործիչներից՝ նա հայ իրականության հրեշտակների լուսաբանությանը մոտենում է նոր դիրքերից: Հենվելով հայ աշխատավորական լայն տարրերի, դեմոկրատական հայ ինտելիգենցիայի վրա, նա կռվի է հղնում հայ իրականության մեջ իշխող «օբսկուրանտների» և հետագեմ գործիչների դեմ: Նալբանդյանի կյանքի հետագա փուլերը լավ են

հայտնի: Երբ ռեակցիան ուժեղանում է և միաժամանակ ավելի ակնհայտ է դառնում Նալբարյանցի հետադարձ շարժումը, Նալբանդյանը որոշում է հանդեսի տապադրությունը փոխադրել արտասահման: Այդ ուղղությամբ նա որոշ քայլեր է ձեռնարկում առաջին արտասահմանյան ճանապարհորդության ժամանակ: Ինչպես հայտնի է, այդ ծրագիրը ինչ-ինչ պատճառներով զլուխ չի գալիս:

Արտասահմանյան երկրորդ ճանապարհորդության ժամանակ Նալբանդյանը ծանոթանում է Գերցենի, Օգարևի, Տուրգենևի և ռուս ուրիշ գործիչների հետ. ապա մոտ հարաբերություններ է հաստատում արևմտահայ առաջավոր գեմոկրատական մտավորականության ներկայացուցիչների հետ (Հ. Սվաճյան, Ս. Ռազվորյան): Նալբանդյանը օգնում և դաշտափարապես ղեկավարում է ամիրալդերական հետադեմ ջորիների դեմ ուղղված պոլսահայ գեմոկրատիայի կողմից տարվող պայքարը: Հնդկաստանում նա աշխատում է կապվել առաջին հերթին հնդկահայ առաջավոր գործիչների՝ թաղիադյանական հոսանքի ներկայացուցիչների՝ Սեթ Աբգարի և Խաչկյանի հետ: Երբ վերադառնում է Հնդկաստանից, նա կապվում է Զմյուռնիայի հայրենասիրական միությունների ներկայացուցիչների հետ: Դրանք գալիս են նավամատուց, ողջունում են, հանդես են կազմակերպում Զմյուռնիայում: Նա է մեկնացնում Լուսինյանի նման ավանտյուրիստներին: Նալբանդյանի անմիջական ազդեցության ներքո ուժեղանում է ամիրայական-կղերական և լիբերալ-բուրժուական հոսանքների դեմ ուղղված պոլսահայ գեմոկրատիայի պայքարը:

Նալբանդյանը գրում և տպագրում է Փարիզում իր «Ներկրագործություն» տրակտատը և «Երկու տող» հրապարակախոսական երկասիրությունը: Այդ երկու աշխատանքների նլա-

կէտը բռնապետութեան դեմ մարտնչող ժողովուրդների միութեան գաղափարախոսութեանն էր: Յարական Ռուսիայի և սուլթանական Ռուրքիայի դեմ պայքարող ժողովրդական զանդվածները պիտի միասնական շարքերով կապվին բոլոր ազատասեր ժողովուրդների հետ ու տապալեին բռնակալ պետութեանները՝ ամենուրեք մահացու հարվածներ հասցնելով բռնակալ ուժերին: Դա, իհարկէ, յուրահատուկ ուտուպիա էր, բայց գերակշռողը այդ ուտուպիայի մեջ դեմոկրատական հայեցողութեանն էր: Հիմնականն այդտեղ հեղափոխական հայրենասիրութեանն էր և ժողովուրդների եղբայրութեան վսեմ պատգամների վրա խարսխված գաղափարախոսութեանը:

Արտասահմանից վերագառնալուց հետո նալբանդյանը ձերբակալվում է: Յարական դահիճները նոր նախիջեանից տանում են նրան Պետերբուրգ և բանտարկում: Ալեքսեևյան Ռավելինի նկուղներից մեկում նա բանտարկված է մնում մինչև 1865 թվականը: Դուրս է գալիս հիվանդ ու կիսահաշմանդամ և քշվում է արստրավայր...: «Ինձի գիր ալ գրել պետք չէր,— գրում է նա,— բայց այս քանի տողը դարձյալ գրեցի...»: Դեկտեմբերին նա հասնում է արստրավայր ու գրում Կամիշինի մասին. «Անպիտան մի տեղ է և ձմեռը բոլորովին մեռած...»: Ծանր հիվանդութեանը դառնում է անհաղթահարելի: Այդ մասին է գրում նալբանդյանը իր եղբորը. «Տկարութեանս շի ներում երկար-բարակ նամակ գրել... ևս օրէ-օր մոտենում եմ գերեզմանին»: Անխուսափելի վախճանը հայտնի էր ցարական զահիճներին: Բժիշկների և, մանավանդ, ականավոր գիտնական-բժիշկ Բոտկինի եղրակացութեանը շատ որոշ էր: Բայց այդ եղրակացութեանը զահիճները չէին կարող ու չէին ցանկանում ընդունել: Նրանց նպատակն էր սպանել հայ խոշոր հեղափոխական-դեմոկրատին:

Նալբանդյանի ու ուրիշ հեղափոխական-դեմոկրատներին
դադարաբարական կապերի ճշգրիտ բնութագրման համար ան-
հրաժեշտ է ամենից առաջ երկու խոսք ասել ժամանակաշրջա-
նի մասին:

Նալբանդյանը, ինչպես տեսանք, ընդհարվել է հետադի-
մական-կղերական «կուսակցության» հետ տակավին 40-ա-
կան թվականներին: Այդ շրջանում դեմոկրատական շար-
ժումը Ռուսիայում թույլ էր: Գյուղական որոշ վայրերում
բռնկվում էին մերթ րնդ մերթ գյուղացիական ապստամբու-
թյուններ, բայց նրանք դեռևս անկաղմակերպ էին և ցրված:
Բայց այդ շրջանում արդեն սկսում է հանդես գալ ուրիշ հեղա-
փոխական-դեմոկրատական հոսանքը, որը, ըստ էության, ար-
տահայտում էր ճորտացած և ճնշված գյուղացիության պայ-
քարը ցարական ինքնակալության դեմ: Մեծ ազդեցություն են
թողնում 1848 թ. մահացած Բեյլինսկու հեղափոխական-դե-
մոկրատական պատգամները հատկապես Պետրաշևսկու խմբ-
բակի անդամների վրա:

Դատաւիտելով «բուրժուական ազատությունները», Գեր-
շենը 1848 թ. ֆրանսիական հեղափոխության անկման անմի-
ջական տպավորության ներքո բյուր անեծճներ է ուղղում «կա-
տաղած խանութպանների» հասցեին. «Քաղքենիները հաղթե-
ցին, 8 հազար դիակներ և 10000 բանտաբկյալներ, ահա՜
ներանց ռադմավարը... ազտոտ տեռոր, մանր տեռոր, հաս-
կացե՛ք, հետադիմական տեռոր ֆրանսիական բուրժուա-
զիայի բթամտության հատուկ...»: Ծանրադույն հուշերի ազ-
դեցության ներքո Գերցենը ընկճվում է և նահանջում դեպի
լիբերալիզմի կայանը: Բայց իր ասորումներով և տենչերով

կապված լինելով հարազատ ժողովրդի հետ, նա հետադաշում, առանձնապես 60-ական թվականներին, նորից անցնում է պայքարի դիմ: Ծանրանալով Գերցենի տատանումների վրա, լենինն ընդգծում է, որ դեմոկրատ Գերցենը ի վերջո հաղթահարում է լիբերալին... Գերցենյան հայեցողության հակասությունները նկատելի է ժամանակին Չերնիշևսկին: Ընդհարվելով, սակայն, բավական սուր կերպով Գերցենի հետ, Չերնիշևսկին աշխատում էր ազատագրել Գերցենին լիբերալիզմի ազդեցությունից: Դրանով է բացատրվում Չերնիշևսկու դիրքը Գերցենի նկատմամբ: Երբ Չերնիշևսկին դատապարտվում է, Գերցենը իր «Կոլոկոլի» մեջ մեծազույն զայրույթով համակված ցատումնալից հորված է գրում ցարական դահիճներին դեմ...

Գաղափարական տարածայնություններն ու բախումները բռնկվում են առանձնապես սուր կերպով 50—60-ական թվականներին՝ հեղափոխական շարժումների նոր հորձանքի տենդոս օրերին: Լենինը կանչ է առնում այդ նոր հորձանքի վրա: Նա շատ որոշակի կերպով շեշտում է, որ Ռուսիայում, հատկապես 1859—1861 թվականներին, ստեղծվել էին «հեղափոխական իրադրությունը» հատուկ բնորոշ պայմաններ: Միաժամանակ լենինը ընդգծում է, որ այդ «հեղափոխական իրադրությունը» չէր կարող դառնալ և չէր դարձել հեղափոխություն: Այնուամենայնիվ շեշտված «հեղափոխական իրադրությունը» այնքան ակներև էր, որ չէր կարող աննշմարելի մնալ 60-ական թվականներին առաջափուր ռուս գործիչների համար: Գյուղացիական շարժումները դառնում էին ավելի ու ավելի լայնածավալ: Երկու մայրաքաղաքներումն էլ համալսարանական երիտասարդությունը 1861 թ. ցուցադրում է իր բացասական դիրքը բավական նշանակալից կերպով: Բազ-

մանում են բնդհատակյա նորանոր խմբակները: Դեմոկրատական մամուլի էջերը դառնում են պայթուցիկ նյութերով լիցուն էջեր: Ռուս երիտասարդության առաջավոր շարքերի համար պարզ էր, որ ասիական բռնապետությունների կամ չինական կարգերի բնագատության նվիրված հոգվածները մեծագույն չափով ուղղված են ցարական բռնապետության դեմ: Հեռատես ընթերցողների համար պարզ էր Չերնիշևսկու պատմական հոգվածների, պատմագիտական խոհերի, դիվսնագիտական ակնարկների ծածուկ և խսկական իմաստը: Քննելով իտալական շարժումների ընթացքը, Գարիբալդիի, Մաձձինիի ելույթները, նա հանդես էր գալիս որպես քաղաքագետ և պրոպագանդիստ: Իր հոգվածների, ինչպես նաև Սիլի քաղաքատնտեսությանը կցված հանճարեղ ծանոթությունների մեջ քննադատում էր կապիտալիզմի կարգերը պաշտպանող տնտեսագետներին...

Թե՛ Դոբրոլյուբովը և Չերնիշևսկին, թե՛ նրանց զինակիցները շատ զեպրում գրում էին ելովպոսյան լեզվով: Բայց ընթերցողները հասկանում էին սիրելի հեղինակներին և իրենց վարքագիծն էլ մշակում էին համաձայն տողերի մեջ հնչող պատգամների և իմաստի:

Այդպես էր ահա 50—60-ական թվականների մթնոլորտը ռուսական իրականության մեջ: Այդ մթնոլորտը շէր կարող մեծ ազդեցություն չթողնել եռանդուն և երիտասարդ Նալբանդյանի վրա՝ հենց առաջին օրերից: Նոր մարդիկ, նոր գրքեր և դասախոսություններ, նոր երգեր, նոր կոչեր ու լուզումներ: Այդ ամենը նա տեսնում ու լսում է համալսարանական միշտ կենդանի լսարաններում: Եվ արդեն 1855 թ. գրված երկու հայ գործիչների նամակագրության ակնարկների մեջ տեսնում ենք նոր ախպի հայ հայրենասերի՝ ռուս հեղափոխա-

կան-դեմոկրատներին արձագանքող «կասկածալից» նախ-բանդյանի դիմաստովերը: Այդ դիմաստովերը շատ ավելի որոշակի կերպով նշմարվում է Նալբանդյանի բոլոր «եւույթների մեջ»:

Այդպիսի «եւույթ» էր նրա լոնդոնյան հասցանի ճանապարհորդութիւնը:

Առաջին անգամ Նալբանդյանը Լոնդոն է մտնում 1861 թ. հունվարի 11-ին, և մնում այդտեղ, ինչպես ինքն է նշում, մոտավորապես մի շաբաթ: Նրկրորդ անգամ նա Փարիզից Լոնդոն է անցնում միկնույն 1861 թ. փետրվարի 3-ին և մնում այդտեղ մեկ ամիս: Վերջապես՝ 1862-ին նա երկու անգամ Փարիզից ուղևորվում է Լոնդոն (հունվարի 8—9 և ապա փետրվարին): Լոնդոնում նա մտնում է գրախանութ, տեղական ուսական ազատ հրատարակութիւններ դնելու նպատակով և այդտեղ ծանոթանում Կիւսիւի հետ, որը համարվում էր լոնդոնյան վտարանդիների հետ կապված գործիչ: Ինքը՝ Կիւսիւի, իր ցուցմունքների մեջ պատմում է այդ հանդիպման մասին, երբ դավաճանելով Գերցենին, դառնում է ցարական կառավարութիւն սպասավոր: Նալբանդյանը սենատական իր ցուցմունքների մեջ պատմում է Գերցենի որդու մասին, որին նա տեսնում է կենդանաբանական թանգարանում: Գերցենի և Օգարեի նամակները ցույց են տալիս, որ Նալբանդյանը Գերցենյան շրջանում համարվում էր բարեկամ անձնավորութիւն: Նալբանդյանը մի քանի անգամ լինում է Գերցենի և Օգարեի մոտ, զրուցում երկու ականավոր գործիչների հետ՝ ժամանակի հրատապ պրոբլեմների մասին: Ինքն էլ մեծ տպավորութիւն է թողնում Գերցենի և Օգարեի վրա: Քիչ առաջ հիշված նամակների մեջ Գերցենը և Օգարեը մեծագույն սիրով են խոսում Նալբանդյանի մասին: Գերցենը

1862 թ. հունիսի 24-ին գրում էր 60-ական թվականների ռուսականավոր գործիչներից մեկին՝ Սերնո-Սոլովյովիչին. «[Նալբանդյանը] շափաղանց աղնիվ մարդ է, ասացեր նրան, որ մենք հիշում և սիրում ենք նրան»:

Այդպիսով, և՛ ժնե մենք ամփոփենք մինչև այժմ հրապարակված փաստերը, կատսենք, որ ռուս առաջավոր գործիչներից հատկապես Գերցենը, Բակունինը, Օգարևը, Տուրգենևը, Սերնո-Սոլովյովիչը շատ լավ հայտնի էին Նալբանդյանին. Ականավոր այդ գործիչների հետ նա անձամբ ծանոթ էր: Բելինսկու, Դոբրոլյուբովի, Զերնիշևսկու, ինչպես նաև «Սովրեմեննիկի» մյուս աշխատակիցների հոգվածները նա կարդում է 1855 թվականից՝ սկսած այն օրերից, երբ ստանում է Պատկանյանից Խակեմովեի հոդվածի մի օրինակը: Նալբանդյանը դիտուլյանը մտնում էր 60-ական թվականների արմատական հեղափոխական-դեմոկրատների գիրքերից: Դիտուլյանը և, առանձնապես, բնագիտությունը քննարկվում էր այդ ժամանակ, որպես տեսական հայեցողությունը կազմավորող և ժողովրդի վերելքին գործնական օգնություն հասցնող աղբյուր: Մենդելևի, Ռուլյեի, Իլինսկովի աշխատությունները Նալբանդյանը ըստ հրեույթին ուսումնասիրում է առանձին ուշադրությամբ: Իր մի ուսումնասիրության մեջ նա կանգ է առնում Լիբիխի վրա, որը նույնպես շատ անգամ է հիշվում 60-ական թվականների ռուս գործիչների շրջանում: Նա ձեռք է բերում Կուլբի և Շլոսերի այն աշխատությունները, որոնք նշվում են Զերնիշևսկու գրախոսությունների մեջ: Ե՛թե մենք ոչ մի վավերագիր չունենայինք, շեշտված տվյալներն էլ, թվում է մեզ, բավական են Նալբանդյանին և ռուս հեղափոխական դեմոկրատների հարաբերությունների բնութագրման համար: Սակայն կան ավելի ցայտուն վավերագրեր,

որոնք առանց երկար մեկնաբանությունների կարող են պարզել անցյալի էջերը:

Մենք նկատի ունենք Նալբանդյանի հասարակական-դործունեությունը և ապա՝ նրա պրական աշխատությունները: Թե՛ այդ դործունեությունը և թե՛ ակնարկված աշխատությունները ցույց են տալիս, որ Նալբանդյանը միշտ մի հիմնական ելակետ է ունեցել՝ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությունը: Նա գիտեր, որ կան հայկական հատվածներ թուրքիայում և Իրանում, եվրոպական ու հնդկական դադթավայրերում: Գիտեր այն էլ, որ հայ ժողովրդի դանազան: հատվածները ապրում են քաղաքական տարբեր պայմաններում: Զանալով մոտենալ հայ ժողովրդի բոլոր հատվածների կեցության ու վիճակի ճանաչողությանը, նա կասկած է Հարություն Սվաճյանի, Ստեփան Ռսկանի, Քյաթիպյանի կամ հնդկահայ վաճառական Սեթ-Աբգարի նման ազատախոհ դործիչների հետ: Նալբանդյանն իր դադափարական ազդեցության տակ է առնում 60-ական թվականներին արևմտահայության մեջ հանդես եկող արմատական-դեմոկրատներին (ձախ սահմանադրականներ) հոսանքը: «Ազգային թշվառություն» խորագրով իր նշանավոր աշխատության մեջ մերկացնում է լիբերալ սահմանադրականների (Սերվիլեն, Գր. Օտյան, Ն. Ռուսինյան և այլք) դավաճանությունը պոլսահայ դեմոկրատիայի շահերին, մերկացնում նրանց կոմպրոմիսը ամիրադերական հատադիմականների հետ: Հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանը աշխատում է ղարկ տալ արևմտահայ ազգային ազատագրական շարժմանը:

1859—1861 թթ. «հեղափոխական իրադրության» պայմանները նկատելի ազդեցություն են թողնում Նալբանդյանի վրա: Թերթիլով «Սովրեմեննիկի» էջերը, նա յուրացնում է

հեղափոխական-դեմոկրատ հրապարակախոսների հեղափոխական պատգամները: Չերնիշևսկին պաշտպանում էր գյուղացիական հեղափոխության գաղափարը: Հեղափոխական ապստամբության միջոցով ժողովրդական զանգվածները սկիտի ստեղծելին նոր, ազատ, դեմոկրատական Ռուսիայի շենքը: Այդ նոր Ռուսիան պետք է հղբայրական ամրակուռ թելերով կապվեր բռնապետական կարգերը ջախջախող հեղափոխական ժողովուրդների հետ:

Չերնիշևսկու և ուրա հեղափոխական-դեմոկրատների այս հայացքները ելակետ են դառնում նաև Նալբանդյանի համար:

Նալբանդյանը գտնում է եռանդուն հետևորդներ արևմտահայ իրականության մեջ: Նրա քարոզը հասկանալի ու պարզ էր: Նա առաջարկում էր ոչ մի հավատ չընծայել կալվածատերերի կամ կապիտալիստների շահերը պաշտպանող պետություններին: Նա կոչ էր անում իր հայրենակիցներին՝ այսուհետև հայ ժողովրդի բախտը կապել ուրա հեղափոխական ժողովրդի ու հեղափոխական գործիչների բախտի հետ: Հայկական հետադիմության գաղափարախոսները մոլեգնորեն անիծում էին Նալբանդյանին և միևնույն ժամանակ, հակառակ իրենց ցանկության, մերկացնում իրենց սոցիալական էությունը: Այդպիսի գործիչներ էին նախկին եզվիտ պրոպագանդիստ Գաբրիել Այվազովսկին, կղերական հրապարակախոսներ Հ. Չերեզյանը և Մ. Մսերյանցը Ռուսաստանում: Գերանցից Այվազովսկին կապված էր ցարական կառավարական որոշ շրջանների հետ: Համաման գործիչ էր Թուրքիայում մի շարք օրդանների խմբագիր և ամիրայական-հետադիմական կուսակցության գաղափարախոս Հ. Տերոյինց-Չամուռճյան պատվելին: Այդ գործիչը իր «Երևակի» ամսագրում

փառաբանում էր արևմտյան կայսրերի «Սրբազան Միությունը», բռնակալ թագավորներին և սուլթաններին, Պաշտպանելով և քարոզելով կրոնական խավարամոլությունը, Տերոյկնցը խարազանում էր Դարվինին և դիտության առաջավոր ներկայացուցիչներին։ Առանց վարանումների պաշտպանելով Սետերնիխին, նա կոչ էր անում նետվել ղեմոկրատ գործիչների դեմ։ Զանալով զրավել կառավարական շրջանների ուշադրությունը, նա դիտավորությամբ հիշեցնում էր իր ամսագրերի էջերում, որ Նալբանդյանն իր գինակիցների հետ միասին արևմտյան հեղափոխականների և կոմունիստների հետ կապված գործիչ է։ Սուլթանական Թուրքիայի հետախուզական օրդանների հետ կապված այդ եղվիտը ձգտում էր սարսափեցնել հայ ընթերցողներին ու կտրել նրանց Նալբանդյանի նման «կասկածավոր» գործիչներից։ Բայց նման տիպի հետադիմական գործիչների հուլյթները ստեղծում են հակառակ էֆեկտ և ավելի ևս ամրացնում ու խտացնում հայ ղեմոկրատական մտավորականների արդեն կազմավորվող շարքերը։ Նալբանդյանն իր գործունեությամբ ստեղծում է 60-ական թվականներին նոր տիպի հայրենասիրական-ղեմոկրատական շարժում, հանդես գալով դաժանագույն բռնապետությունների տիրակալության օրերին, որպես ուս առաջավոր գործիչների՝ հեղափոխական-ղեմոկրատների գաղափարների ջահակիր ու պրոպագանդիստ։ Դա է ահա, որ տեսնում են Ալվազովսկին ու Տերոյկնցը՝ մետերնիխյան հետադիմության գաղափարախոսները։ Դա է, որ թևադրում է հայկական հետադիմական մունետիկներին մոլեգնորեն ու միաձուլլ շարքերով նետվել ամենից առաջ Նալբանդյանի՝ «Հյուսիսսիսիայի» ամենաարմատական աշխատակցի և հայ հեղափոխական-ղեմոկրատական մտքի ամենատաղանդավոր

ներկայացուցչի դեմ: Տեսնենք այժմ՝ ինչպես են արտացոլվում ուսս հեղափոխական-դեմոկրատներին գաղափարները Նալբանդյանի երկերի մեջ:

3

«Հյուսիսափայլը», ըստ Նալբանդյանի նախնական ծրագրի, «լիալի լինելու մարտական օրգան՝ ուսական «Սովրեմեննիկի» նման մի ամսագիր: Այդպես էր ըստ երևույթին Նալբանդյանի նախագիծը: Սակայն վերջնական տնօրենը նա չէր:

Նալբանդյանի կողքին կանգնած էր ամենից առաջ Ստեփանոս Նաղարյանցը՝ ամսագրի հիմնական ղեկավարն ու պաշտոնական խմբագիրը: Լիբերալ էր, ուռքից մինչև գլուխ իդեալիստ, անչափ զգուշավոր գործիչ և շափավոր հայացքներով համակված շատ լույսւլ բուրժուական պրոֆեսոր: Լիբերալ լինելով հանգերձ՝ այդ պրոֆեսորը օգնական և, նույնիսկ, ուղեկից էր ընդհանուր թշնամու՝ կղերական-աղայական հոտանքի դեմ մղված սուր պայքարի օրերին: Մեծ հենարան չունեի Նաղարյանցը: Իրականում կտրված էր հասարակության առաջավոր շարքերից, թեև աշխատում էր ամեն կերպ մոտենալ թե՛ այդ շարքերին, թե՛ երիտասարդությանը: Նաղարյանցը ավելի քան լավ դիտակցում էր, որ առանց երիտասարդության և, մտնալմանց, առանց Նալբանդյանի՝ ինքը ընթերցողների լայն շարքեր չի ունենա և կմնա մեկուսացած գործիչ: Նա բարձր էր դնահատում Նալբանդյանին և չէր համարձակվում բացորոշ կերպով ընդհարվել նրա հետ: Գուցե և խորհում կամ երազում էր, թե կկարողանա վերադաստիարակել կրակոտ Նալբանդյանին, կամ որեւէ ձևով «օգտագործել» նրան: Ի՞նչ էր խորհում և կամ ի՞նչ պիտի մտածեր Նալբանդյանը այդպիսի խմբագրի կողքին: Իհարկե, պիտի աշ-

խատեր ամենից առաջ օգտագործել լեզալ օրդանի բոլոր հնարավորությունները և աղատուրեն արծարծել իր հեղափոխական-դեմոկրատական գաղափարները: Նա այդպես էլ վարվում է: Ըստ երևույթին Նալբանդյանի այդ տակտիկան նկատում է Նաղարյանցը: Երբ մենք ուշագրությունաբ թերթում ենք «Հյուսիսսփայլի» էջերը և ուսումնասիրում ավելի հատկանշական հոդվածներն ու նյութերը, պարզորոշ կերպով տեսնում ենք երկու գործիչների բաժանող սահմանագիծը: Նալբանդյանը գրում է բնագիտական հոդվածներ և աշխատում տարածել ժամանակի առաջավոր գիտնականների տեսությունները: Նա կանգնած էր մատերիալիզմի դիրքերի վրա: Միևնույն «Հյուսիսսփայլի» մեջ կամենալով ապահովել հայ ընթերցողին Նալբանդյանի հոդվածների ազդեցությունից, Նաղարյանցը տպագրում է իր հոդվածները և բացորոշ կերպով պաշտպանում Շելլինգի կամ նմանօրինակ այլ իմաստասերների իդեալիստական տեսությունները: Նալբանդյանը գրում է կանանց ազատագրության մասին և հանդես գալիս որպես կանանց դատի պաշտպան: Հիշենք այստեղ այն, որ կանանց ազատագրության պրոբլեմը շատ ակտիվ կերպով առաջադրվում էր ուսս դեմոկրատական մամուլի էջերում: Ըերիշևսկին, նույնիսկ Միլի բաղաքատեսությունը կցված ծանոթագրությունների մեջ կանգ է առնում կանանց հարցի վրա: Նալբանդյանը շոշափում է միևնույն պրոբլեմն իր արձակ երկասիրության՝ «Մեռելահարցուկի» մեջ: Եվ ահա, երբ Նալբանդյանի երկերից հետո անցնում ենք Նաղարյանցի ասույթներին, տեսնում ենք անսպասելի մի բան: Նաղարյանը՝ «արեմտյան քաղաքակրթության» այդ էքսպանսիվ ջատադովը և երկրպագուն, «Հյուսիսսփայլի» մեջ զրվատում է անտիկ աշխարհի հարեմները, էքսպանսիվ տողեր նվիրե-

յով հունական հին հյունեյկոնների իղեալականացրած նկարադրությանը: Երկու հրապարակախոսների ոճն էլ շատ յուրահատուկ է: Նաղարյանցը գրում է հանդիսավոր ու միաժամանակ ցամաք ոճով: Նալբանդյանը հրքեք չի ծածկում իր հույզերը և գրում է ժողովրդական տրիբունին հասուկ կրակոտ տոնով: Նաղարյանցը կոչ է անում բոլորին հաշտվել: Նալբանդյանը ավելորդ է համարում այդօրինակ բարոյախոսությունը և գտնում է, որ հայ իրականության մեջ կան արդեն ձևավորված ու ներհակ հոսանքներ: Նա շեշտում է, որ միմիայն սկզբունքների պարզաբանումը և բացահայտ պայքարը կարող են օժանդակել ժողովրդի կուլտուրական վերելքին: Երբ մենք անգամ շատ թուուցիկ կերպով համեմատում ենք երկու գործիչների հոգվածների մեջ արծարծված դադափարները, հաճախ տեսնում ենք կարծես քողարկված մի բանավեճ: Այդ բանավեճը ցույց է տալիս, որ Նաղարյանցը չէր ցանկանում շեղվել լիբերալ դիրքերից և աշխատում էր ամեն կերպ հակահարված տալ իր կրակոտ ուղեկցի «անհանգուրժելի» պրոպագանդին: Նալբանդյանն իր հերթին երբեք չէր կորցնում առիթը և նույնիսկ աշխատում էր հետևողական կերպով քանդել եղերական-ազգայնական պատգամներին ուժ տվող իդեալիստական փրկիսոփայության սկզբունքները: Հրապարակախոսական գործունեությունը նրա համար ադիուտանտն աշխատանք էր: Գրականությունը Նալբանդյանի համոզումով պետք է լիներ գաղափարական պրոպագանդ: Մի շարք բանաստեղծություններ է տպագրում նա «Հյուսիսափայլի» էջերում և բոլոր այդ բանաստեղծությունների մեջ հանդես է գալիս ամենից առաջ որպես պրոպագանդիստ: Նույնիսկ հուշերի բնույթ կրող իր քնարական «Մտնկության օրեր» բանաստեղծության մեջ նա հավատարիմ է մնում գա-

ղափարական արվեստի տառգամներին Բանաստեղծություն
առաջին տողերը տխուր են՝ քնարական ուրույն հուշերի
բնույթ են կրում: Բայց միևնույն այդ բանաստեղծության մեջ
Նալբանդյանը ժողովրդական տրիբունի նման գիշում է.

Ես պիտի դուրս գամ գևի հրադարակ,
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկա օրերում այլ ի՞նչ սե քնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին.
Արյուն ու կրակ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Ռուս ականավոր երեք պրոզներ ներբողներ ձոնելով
«ազատության», կովի էին ելել բռնակալական կարգերի դեմ:
Ռադիշչևից հետո ազատությունը երգում է Պուշկինը, իսկ
Պուշկինից հետո ազատության մասին գրում է իր բանա-
ստեղծությունը Օդարեր, որին հետևում է Նալբանդյանը:
Կցունվեն գուցե «անաղարտ» արվեստի կամ «անկոխ» պոե-
զիայի տեսաբաններ, որոնք կնշմարեն Նալբանդյանի բա-
նաստեղծությունների մեջ թերություններ: Սակայն դրանք էլ
չեն կարող ժխտել այն, որ Նալբանդյանի երգերը ժամանա-
կին բոլոր հայաբնակ վայրերում ունեն մեծագույն հասա-
րակական հնչեղություն: Երբ 1863 թ. հնդկահայ առաջավոր
դործիչները լուր են ստանում Նալբանդյանի կյանքի վերջին
փուլի մասին, այդ դործիչներից մեկը, խմորատիպ «Ներա-
բան» հանդեսի երկու համարների մեջ ընդարձակ առաջ-
նորդող է տպագրում Նալբանդյանի մասին և կցում այդ
առաջնորդողին վերահիշյալ բանաստեղծությունները: Կան-

տեմիրից, Պուշկինից, Լերմոնտովից հետո նալբանդյանը անցնում է 60-ական թվականների ոռոս պոետների ուսումնասիրության: Բնորոշ է այն, որ նա գրում, թարգմանում, փոխադրում է, հենվելով «Սովրեմեննիկի» մեջ հրապարակված նյութերի վրա: Բերանժեի երգերի փոխադրության ժամանակ նա հենվում է Կուրոշկինի և Լենսկու թարգմանությունների վրա: Կարգում է միենույն «Սովրեմեննիկի» մեջ գետնադրված հայտնի հեղափոխական բանաստեղծ Միխայիլի թարգմանությունը (Հայնեից) և ապա գրում իր փոխադրություն-բանաստեղծությունը: Սովետահայ բանասերներից մեկը ժամանակին նշել է, որ նալբանդյանը անգամ իր հայտնի «Իտալացի աղջկա երգը» գրել էր ոչ այնքան իտալական պոետ Մերկանտինիի, որքան այդ պոետի բանաստեղծության ուսերեն արձակ թարգմանության անմիջական ազդեցության ներքո: Այդ թարգմանությունը լույս էր տեսել Գերցենի «Բեկոպյին աստղ» ամսագրի մեջ: Մեկ թվում է, որ նալբանդյանի վրա կարող էին մեծ ազդեցություն թողնել նաև «Սովրեմեննիկի» մեջ տպագրված՝ Չերնիշևսկու ակնարկները, առանձնապես Գարիբալդիի և իտալացի աղջիկների հանդիպման նվիրված պատկերավոր տողերը: Եբբ կարդում ենք նալբանդյանի «Հենրիկոս Թովմաս Բոքլի հիշատակին» բանաստեղծությունը, նորից կարծես տեսնում ենք «Սովրեմեննիկի» հայ ընթերցողին: Բոքլի հայտնի աշխատությունը շատ ժողովրդական գիրք էր 60-ական թվականներին: Կարճ ժամանակվա ընթացքում լույս են տեսել ուսերեն երկու թարգմանություններ: Բոքլը և Դրեպերը սովորաբար քննարկվում էին որպես սխոլաստիկայի, կրոնական-իդեալիստական հայեցության և միստիկայի սկզբունքները դատափետող դիտնականներ: Բոքլի և Դրեպերի գրքերը

առաջին փուլերն էին իդեալիզմի կայաններից դեպի մատու-
րիալիստական նոր դիրքերը քայլող գործիչների համար:
Նալբանդյանն էլ ըստ հրեույթին այդպես է անցել իր ուղին:

Նրա հայտնի «Հեզելը և նորա ժամանակը» փիլիսոփա-
յական աշխատությունը, ինչպես հաստատված է ներկա-
յումս, գրվել է Պետրոսյավուլյան ամբողջում: Չնայած դրան,
այդ աշխատությունը նույնպես կարող է քննարկվել որպես
1859 թ. կամ 1860 թ. հրապարակված աշխատանքների տե-
սական փիլիսոփայական ուրույն հիմնավորում: Չերնիշևսկու
մարտական ուղեգծի հետևորդը փիլիսոփայական այդ աշ-
խատության մեջ երևում է: Նալբանդյանի համար փիլիսոփա-
յությունը վերացական սկզբունքների կոմպլեքս չէ և ոչ էլ,
մանավանդ, բնագիտությունից կտրված տեսական համա-
կարգերի ամփոփում «...Յարվոնել մարդկային կյանքը՝
ահա՛ փիլիսոփայությունը. ինչ նամիով կուգես զնա, միայն
թե խորհուրդը և նպատակը այդ լինի: Հայտնի է, թե ավելի
կարճ, ավելի բնական և ավելի հաջող ճամփան ընտրելի է,
քան այն բարակ և միգաւաւո ճամփաները, որ ցույց էին տա-
լիս այս ու այն փիլիսոփայական համակարգությունքը...»*:
Նալբանդյանը գիտե, որ պաշտօնական վերնաշենքը կա-
ռուցվում է հասարակական կեցության հիմքի վրա: Իրեն հա-
տուկ ոճով նա նկատում է. «Որեւից փիլիսոփայի փիլիսոփա-
յական համակարգությունքը ուղղակի աղբերանում է այն աղ-
զի կյանքից և պատմությունից, ինչ ազգի ինքը պատկա-
նում է...»: Միաժամանակ Նալբանդյանը շեշտում է նաև հե-
տեյալը. «Միևնույն ազգի փիլիսոփայությունը նույնիսկ իր
համար չէ կարող ամեն ժամանակ ուղիղ լինել, որովհետև

* Ընդգծումները Ա. Կարինյանինն են.—խմբ.:

ժամանակն առաջ է վազում, հասկացողությանց դոմարը կերպարանափոխ է լինում...»: Պատմական դիրքերից է մոտենում նալբանդյանը փիլիսոփայական ուսմունքների էվոլյուցիային. «Ո՛չ Հեգելի աշակերտ ենք,— դրում է նա,— և՛ ոչ Շելլինգի»: Ամբողջ աշխատությունը կրում է թուղթիկ դիտողությունների բնույթ և ղերծ չէ որոշ հակասություններից: Իսկյ դա «մատենախոսություն» լինելով հանդերձ, նշանակալից մի գրություն է, որպես ուսմամուլի էջերում արժարժեք ունեցող պրոբլեմների յուրահատուկ մի արձագանք: Նալբանդյանը կանգ է առնում իր մատենախոսության մեջ Գրանտիսի: Վրա և ձայնակցում է այդ պատմաբանին, թեև միաժամանակ աշխատում էր ընդգծել իր սեփական ինքնուրույն գիտքը. «Ինչ որ ինձ է վերաբերում, ես ոչ մի համակարգություն չեմ ընդունում, և ամեն համակարգությանց ստրկաբար հետևողքը ծաղրից ավելի ուրիշ բան թող չսպասեն ինձնից...»:

Մեր ուշադրությունը գրավում է նաև նալբանդյանի փիլիսոփայական այդ աշխատության շատ կտրուկ և առույգ տոնը: Մետուցլի նման է գրում նալբանդյանը, գրեթե միշտ կատեգորիկ կերպով: Կարծես գիտե, որ կունենա լսարան և հետևողների շարքեր: Ժիշտ այդպիսի տոն ունեն նրա բանասիրից գրված նամակները, որոնք մեծ մասամբ շոշափում են հասարակական և դիտական կարեւորագույն պրոբլեմներ:

Միևնույն տոնն ունի նաև «Սոս և Վարդիվների» մասին գրված նրա ելակի և բովանդակալից քննադատական ուսումնասիրությունը: Մեր գրականության մեջ ժամանակին արդեն չէլի է, որ նալբանդյանի այդ աշխատության մեջ հիմնականում կիրառվում են ուսմամբ հեղափոխական-գիտնական ջերմիչեսկու էսթետիկայի սկզբունքները:

Նալբանդյանը գրականությունը և գրական դեմքերին մոտենում է մատերիալիստական դիրքերից: Արդեն նախաբանի մեջ նա շեշտում է, որ մտադիր է ցուցադրել գրականության անբաժան կապը կյանքի հետ. «Ազգերի սեփական դպրության մեջ, այսինքն՝ նոցա բանաստեղծական գործերի մեջ, երևում է նոցա հոգին, նոցա վարքն ու բարքը...»: Նալբանդյանի համոզմամբ՝ պատմաբանին կարող են արժեքավոր նյութեր մատակարարել գեղարվեստական երկասիրությունները: Անցնելով Պոռշյանի բնութագրմանը, Նալբանդյանը նշում է, որ այդ վիպագիրը «մի անխարդախ հայելի է, ուր ցոլանում են բնության ճառագայթքը»: Վերջին խոսքերի հմաստը պարզ է: Պոռշյանը գնահատվում է այդտեղ որպես իրականության ռեալիստ նկարիչ: Պոռշյանի վեպի թերությունները վրա ևս կանգ է առնում Նալբանդյանը: Նա նշում է, որ «Մոս և Վարդիթեր» վեպի որոշ թերությունները նշմարվում են հատկապես այն էջերում, ուր հեղինակը դուրս գալով բնականի սահմանից, օգնություն է խնդրում երևակայությունից: Նալբանդյանի քննադատական ուսումնասիրությունը սոսկ քննադատություն չէ, այլ նաև հրապարակախոսական գրություն: Օգտվելով առիթից, Նալբանդյանը ոչ միայն քննադատում է Պոռշյանին, այլ նաև արժարժում իր հասարակական կամ գիտական մտորումները: Տեսնելով, որ Պոռշյանը ծանրանալով նատուրալիստական մանրամասնությունների վրա և նկարագրելով հին բարքերն ու սովորությունները, հաճախ ինքն էլ դառնում է հեռու անցյալի կուլյր երկրպագու, Նալբանդյանը վճռական կերպով դատափետում է հեռամենաց անցյալը իդեալականացնող գործիչներին:

«Ի՞նչ կարող են մեզ հիշեցնել,— դրում է նա,— միջին դարերը. կործանում, գերություն, կոտորած, արյուն, կրակ,

սով, խավար և մահ: Սոքա են մեզ համար միջին դարերի բերածը, և նոցա բեռի տակ ճնշված է այսօր հայ մարդը: Թափել աչդ բեռը մեր վրայից՝ ահա՛ մեր գործը...»: Բնորոշ է այն, որ դատափետելով անցյալի ջատագովներին, Նալբանդյանը հրահանգում է թերթիկ և ուսումնասիրել լիբրիսի նամակների էջերը: Նա ընդգծում է, որ անցյալի իդեալիզացիայով սովորաբար տարվում են ավելի հաճախ հայ մտավորականության և ոչ թե ժողովրդի ներկայացուցիչները: «Մեր հասարակ ժողովուրդը,— գրում է նա,— շատ անգամ ավելի ազատ է միջնադարյան լուծից, քան թե մեր պատվելի գրագետը... Մեր պարոնները անգաղար աչդ միջին դարերի կպրե կարասում լողալով՝ ազգության և յուսավորության անունով, աշխատում են նորոգել և հաստատել ազգի վրա այդ խավար ուղղության տիրապետությունը...»:

Ավելի քան ակներև է, որ Նալբանդյանը այդ տողերը ուղղում էր անմիջապես հայ կղերական հոսանքի պարագլուխների՝ Կ.Լ. Բավականի մեծ տեղ են բռնում Նալբանդյանի քննադատական ուսումնասիրության մեջ կրոնական սնոտիա-պաշտությանը նվիրված քննադատական դիտողությունները: Կրոնական տրագիգիանների կամ ավանդույթների մեկնաբանության միջոցով Նալբանդյանը աշխատում է ժողովրդականացնել դիտության տվյալները: Իր աշխատության հատկապես այդ մասում Նալբանդյանը բավական մանրամասն էանք է առնում Գալիլեի դատապարտության պատմության վրա և, օգտվելով առիթից, նորից խորադանում հայ ամիրա-լական-կղերական կուսակցության հայտնի գաղափարախոսին՝ Տերոյինց-Չամուռճյանին:

Անհրաժեշտ է երկու խոսք ասել նաև լեզվի պրոբլեմի յուսաբանությանը նվիրված այն դիտողությունների մասին,

որոնք նկատելի տեղ են զբաղում «Կրիտիկայի» մեջ: Նույնպես, ինչպես հայտնի է, թերագնահատելով ժողովրդական բարբառների նշանակությունը, ժամանակին, միակողմանի է գնահատել անգամ Սալաթ-Նովայի խաղերի տաղանդավոր հրատարակիչ Ախվերդյանի նախաձեռնությամբ սկսված աշխատանքը: Նախքան դյանը մեծագույն նշանակություն է տալիս ոչ միայն ժողովրդական բանահյուսության, այլ նաև ժողովրդական լեզվի և, առանձնապես, բարբառների ուսումնասիրությանը: Լեզվի կառուցմանը և էվոլյուցիային նա մոտենում էր գիշերված, ուշադիր պատմաբանի գիտական հայեցողությամբ: Նա առանձնապես շեշտում է, որ Պոռչյանի նախաձեռնությունը «մեծ շնորհակալության արժանի գործ է»: Միաժամանակ նախքան դյանը նկատում է, որ Պոռչյանը տարվելով՝ ընկնում է որոշ ծայրահեղությունների մեջ և զգալի չափով նսեմացնում իր վեպի արժեքը: Նա կոչ է անում ուշադրությամբ հետևել և ուսումնասիրել հայ բարբառները: «Բնության և պատմության ազդեցությանց մասին,— կարդում ենք Կրիտիկայի մեջ,— պատասխանատու չէ մարդը, ուրեմն և պատասխանատու չէ և ոչ իսկ պախարակելի կամ ծաղրելի, եթե մի սարսափելի ավերանքի տակ է ընկել» պատմաբանի գիտական հայեցողությամբ: Ահա ինչու նախքան դյանը գրական գնահատություն է տալիս Պոռչյանի վեպին: Պոռչյանը, ասում է նա, գուցե և դիտավորությամբ է գրել Աշտարակի բարբառով, որպեսզի «կարգացողը ոչ միայն Աշտարակի վարքի, բարքի, այլ նորա լեզվի վրա էլ տեղեկություն ստանա...»:

Հետաքրքրական են Կրիտիկայի մեջ նոր լեզվի՝ «համապատասխան միության» պրոբլեմի լուսաբանությունը նվիրված տողերը. «Նոր լեզվի հիմնավոր գիտությունը,— գրում է նա,— նորա մշակությունը և առաջադրությունը որպես նաև ապա-

դա միության գաղափարը առանց գավառական բարբառների
«դնության աներեւակայելի է անգամ...»։ Մեզ թվում է, որ
հատկապես այդ տողերի մեջ Նալբանդյանը մի սրող չափով
քննադատում է նաև Նազարյանցին, առանց նրա անունը տա-
լու։ Հատկանշական են հետևյալ տողերը. «Ստրկանալով հին
լեզվին, առանց ժողովրդին ականջ դնելու, լեզվի նոր ծլած
ձևերը, որ դեռ թարմ են, և կերպարանազործվելու վրա կա-
պելով և ճնշելով անցածի և մեռածի պատանքի մեջ, նոր
լեզվի մշակութային գաղափարը ազդին համար դառնում է
նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին և մեռած լեզվի
դործագրության գաղափարը։ Անշուշտ, այս խոսքերը չեն
նշանակում, թե հին լեզվի լծից աղատվելով՝ նոր լեզվի մշա-
կությունը պիտի դնել այս կամ այն գավառական բարբառի
լծի տակ...»։

Քննադատելով երկու ծայրահեղությունները, Նալբանդ-
յանը հիշեցնում է, որ նոր լեզուն մշակողները պարտավոր են
ամենից առաջ հաշվի առնել ժողովրդի մեծամասնության շա-
հերը։ Այդ մշակները պիտի ձգտեն, «որքան կարելի է, առա-
վել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով
խոսել...»։

Լեզվի շինարարությունը պատմական բարդ պրոցես է՝
«ծանր խնդիր», բայց և այնպես, Նալբանդյանի կարծիքով՝
«ճարտար» հեղինակները կարող են նկատելի դեր կատարել,
որպես նոր լեզվի կառուցողներ։ «Նոր լեզուն,— գրում է Նալ-
բանդյանը,— պիտի նայվի և մշակվի ինֆնուրույնաբար,
առանց տմենելի հին լեզվից խոյնելու, առանց գավառական
բարբառների կամ օտար լեզուների ազդեցությանց ստրկա-
նալու։ Բոլոր գավառական բարբառների էական տարերքը,
որ իրենց ձևով և կազմությամբ ավելի ընդունակ են, կենդա-

նի, ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնին ճարտար հեղինակների քուրայի մեջ... Օտար խնդիր է այս և իր բնությամբ շատ ժամանակի կարոտ, բայց, գո՞նե, այս և մեր ճանապարհը...»

Եւ դիտավորութեամբ կանգ առաւ իւրի մանրամասն լեզվի կառուցման մասին նետված այդ դիտողութիւնները վրա: Նախանգյանը իր Կրիտիկայի հատկապէս այդ էջերի մէջ հանդէս է գալիս որպէս ուսս առաջավոր գրողների կողմից պաշտպանված գաղափարների ջահակիր ու հետեող: Նախանգյանի Կրիտիկայի ամբողջ ձուլվածքը կուռ է և միասնական: Ժողովրդական սովորութիւնները, բարքերը, հին երգերը, ժողովրդական բանահյուսութեան վավերագրերը և, վերջապէս, ժողովրդական լեզուն ու բարբառները, 60-ական թվականներին առանձնապէս, դեմոկրատական հոսանքի հետ կապված ուս գրողները քննում և ուսումնասիրում էին մեծագույն եռանդով և ուշադրութեամբ:

Երբ թերթում Լնք ուս բանասերների ուսումնասիրութիւնները, մենք պարզորոշ կերպով նկատում ենք անբաժան աչն կապը, որ միացնում է առաջավոր ուս բանասերներին Դոբրոլուբովի և Զերնիշեակու հետ: Ժողովրդայնութեան պատգամների վրա խորսխված գրականութիւնը պաշտպանող Բելինսկին ժամանակին կանգ է առել ժողովրդական բանահյուսութեան վավերագրերի վրա: Հեղափոխական-դեմոկրատական գրողների մարտական օրգան «Սովրեմեննիկի» էջերում 60-ական թվականներին լույս են տեսել ժողովրդական բանահյուսութեանը նվիրված քննական ուսումնասիրութիւններ: Ահա՛ այդ ամենը ակամայից հիշում է ընթերցողը, երբ ուսումնասիրելով Նախանգյանի կրիտիկական ուսումնասիրութեան ընդհանուր կառուցվածքը, աշխատում է լուսա-

բանել նալբանդյանի հիմնական մտքերի ընթացքն ու ուղ-
ղությունը:

4

Նալբանդյանի գրողարանում կա, ի միջի այլոց, տնտե-
սագետ Մուխնարիի քաղաքատնտեսության դասընթացի առա-
ջին հատորի ռուսերեն թարգմանությունը (1860): Նալբանդ-
յանը հատուկ մակագրությամբ (մատիտագիր) ընդգծում է,
որ այդ հրկասիրությունը տխմար ու զազրելի գործ է... Նրբ
թերթում ենք Մուխնարիի գիրքը, միանգամայն հասկանալի է
դառնում նալբանդյանի զայրույթը: Մուխնարին բուրժուական
խմաստասեր էր: Իր գիրքը նա կազմել էր բացառապես «սո-
ցիալիստներին» դատափետելու նպատակով: Պաշտպանելով
«արդյունաբերական ազատության» սկզբունքները՝ Մուխնա-
րին, ի միջի այլոց, նետվում է Մալթուսի բոլոր քննադատ-
չերի դեմ: Նա գտնում էր, որ տնտեսագետները պիտի հեն-
վեն Մալթուսի ուսմունքի վրա: Պաշտպանելով կապիտալի
և մասնավոր սեփականության շահերը, նա իր ամբողջ ուսում-
նասիրությունը գրում էր բանվորներին և աշխատավոր ժո-
ղովրդին իբր թև «խրատելու» ու «խեղճի բերելու» նպատա-
կով:

Մուխնարիի գրքի առթիվ նետված նալբանդյանական հա-
կիրճ «ափնարկը» ցույց է տալիս, որ նալբանդյանին լավ էր
հայտնի տաեկավին 1860 թ. ռուս հեղափոխական դեմոկրատ-
ների գիրքը Մալթուսի ուսմունքի նկատմամբ: Չերնիշևսկու
հայտնի թարգմանությունը (Միլլի «Քաղաքատնտեսություն») և
ժանոթությունները լույս են տեսել «Սովրեմեննիկի» մեջ:

Ոչ մի կասկած չկա, որ այդ ամսագրի եռանգուն ընթերցող Նալբանդյանը ծանոթ էր Չերնիշևսկու ծանոթությունների հետ և իր վերոհիշյալ դիտողությունն էլ գրել էր դրանց անմիջական ազդեցության ներքո:

Ինձ թվում է, որ նրան պիտի լավ հայտնի լիներ նաև Մոլինարիի ուսերեն հրապարակության առթիվ «Սովրեմեննիկի» էջերում հրապարակված մատենագրական տեսությունը, որի հեղինակը նույնպես Չերնիշևսկին էր: Դառափետույով ստորաբարշտվածը տարված ուսու բուրժուական տնտեսագետներին, Չերնիշևսկին հեղինակում մերկացնում է Մոլինարիի տնտեսագիտական հայեցության հետադիմական էությունը: Նա կանգ է առնում նաև Մոլինարիի պատվին կազմակերպված ժողովի վրա: Ամբողջ գրախոսությունը լեցուն է սուր ակնարկներով: Նալբանդյանի հակիրճ դիտողության մեջ բնորոշ է «զագրեյի» խոսքը: Չերնիշևսկին գլխավորապես ծաղրում է, Նալբանդյանը արտահայտում է իր անսահման զայրույթը, նկատի առնելով, անշուշտ, Մոլինարիի հետադիմական հայեցողությունը:

Ես կանգ եմ առնում Նալբանդյանի այդ դիտողության վրա ահա ինչու: Սովորաբար Նալբանդյանի «Երկրագործության» մասին գրող առանձին բանասերներ շատ որոշակի կերպով կտրում են «Երկրագործության» հեղինակին «Հյուսիսափայլի» աշխատակից Նալբանդյանից: Մենք արդեն տեսանք, որ այդօրինակ մոտեցումը սխալ է և մակերեսային: Նալբանդյանի երկերի ժողովածուին կցված ծանոթությունների հեղինակները հսկայական աշխատանք են կատարել: Նալբանդյանի ուսումնասիրությունների քննարկմանը նվիրված գիտական աշխատությունները քանզի են ավելի քան վճռական կերպով հայ ազգայնական պատմաբանների ջան-

քերով ստեղծված սխալ հերյուրանքները: Համեմատաբար ավելի բիշ էն ուսումնասիրված նալբանդյանի գրադարանի պատմական և հասարակագիտական գրքերը, որոնք, ինչպես ասացինք, նույնպես պիտի գրավեն մեր առանձին ուշադրությունը:

Այսպես թե այնպես՝ ականերե է, որ Կուբի ու Մոլինարիի գրքերն ուսումնասիրող նալբանդյանը ժամանակին կարդացել է Չերնիշևսկու գրախոսությունները և, լիովին միանալով Չերնիշևսկու մտորումներին, անցել տնտեսագիտական պրոբլեմների մանրակրկիտ ուսումնասիրության՝ իր երկրորդ առտասանմանյան ուղևորությունից առաջ: Փարիզում նա միայն նորից ամփոփում էր իր մտածողություններն ու խոհերը: Այգոսեղ նա հնարավորություն է ստանում ընդհուպ մոտենալ ռուսական անլեզալ հրատարակությունների, ինչպես նաև առանձին ուսույթական սոցիալիստների երկերի ուսումնասիրությանը: Ամփոփելով իր խոհերը, հենց Փարիզում էլ նա տպագրում է իր «Երկրագործություն» տրակտատը: Նալբանդյանի հիմնական հլակետն այգոսեղ շատ պարզ է: Որոշակի կերպով նա շեշտում է, որ կապիտալիստական Արևմուտքը ռեգրես է ստեղծում և նոր շղթաներ կռում ամենուրեք: Արևմուտյան պետությունների դադոթային էքսպանսիան իրականում բռնակալ պետությունների արշավ է: Նալբանդյանը մերկացնում է առանձնապես Անգլիայի դադոթային քաղաքականության իսկական էությունը Հնդկաստանում և Զինաստանում: «Անգլիան,— կարգում ենք «Երկրագործության» մեջ,— ամիսը երեք շոգենալ ամիսն բռնությամբ ներս է տանում Չինաստան և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենալ արծաթ է ստանում. այս անբարոյականություն է...»:

Նա այստեղ կանգ չեմ առնում Նալբանդյանի աշխատության առանձին թերությունների վրա: Նա կանգ է առնում «բանականության» վրա. բարոյախոսական դիտողություններ է անում. նույնիսկ բնկնում է որոշ հակասությունների մեջ: Այս ամենը բացատրվում էր գուցե և նրանով, որ հապճեպ կերպով հրատարակելով իր տրակտատը՝ Նալբանդյանը հնարավորություն չի ունեցել ավելի մեծ ուշադրությամբ վերանայել իր աշխատության որոշ էջերը: Չնայած որոշ հակասություններին, Նալբանդյանը կապիտալիստական Արևմուտքի նկատմամբ ունի շատ կտրուկ բացասական տեսակետ:

«Մեր աչքի առաջ են,— գրում է Նալբանդյանը,— բյուրաՎոր անգործ գործավորը, որ տանջվում են սովից և վերջին ճիգն են փափում, պատերազմելով մի ծայրացյալ աղքատության հետ...»: Կանգ առնելով «աղյուսյան» վրա, Նալբանդյանը շեշտում է, որ «իսկական աղյուսյանը» հասարակ ժողովուրդն է, և ոչ թե ժողովրդին շահագործող «մեծատունները»: Նա դատաւիհտում է պատերազմների և կոտորածների հեղինակներին. «Եվ խեղճ ազգը (կարգա՝ ժողովուրդը—Ա. Ա.) չիրում է ծանր հարկեր, ղոհում է յուր առույգ դավախները թշնամին վանելու համար. ոգեւորվում է հաղթությամբ, տաղեր է երգում և գործը ավարտվելուց հետո ուրախ-ուրախ վերադառնում է յուր տեղը, կարծելով և հավատալով, թե մեծ դործ կատարեց, հայրենիքը փրկեց, հողը փրկեց և պատիվը պահեց: Սուրանից ավելի կոպիտ և խոշոր հեղնություն մենք չենք կարող երևակայել...»:

Նալբանդյանի տրակտատի առաջին մասը կազմված է այդ ձևով: Մի ականթարթ հիշում ենք Գերցենի հայտնի «Ռուս ժողովուրդը և սոցիալիզմ» աշխատության (նամակ՝ ուղղված Միլեյին) որոշ էջերը, երբ ուշադրությամբ հետևում ենք

Նալբանդյանի քննական դիտողություններին: Պատասխանելով կապիտալիստական պետությունները՝ Նալբանդյանը կանգ է առնում նաև ցարական միապետության քաղաքականության վրա: «Երկրագործության» ամբողջ առաջին մասը, ըստ էության, ուղղված է առաջին հերթին նրանց դեմ, որոնք «թուրքահայերի» ազատագրությունը կամ հայ ժողովրդի «վերածությունը» կապում են կապիտալիստական պետությունների և ցարական կառավարության «հայասիրական» քաղաքականության հետ: Այլ խոսքով՝ Նալբանդյանը կովի է ելնում այս անգամ ոչ միայն պահպանողական, այլ նաև լիբերալ «հայրենասերների» դեմ: Դրա համար էլ նա ընդգծում է, որ Եվրոպայում «պիսավոր նյութը» ամենից առաջ «սոստիական խնդիրն է», որ տակավին չի լուծվել, թեև «կանոնա թե ուշ սոսկալի» փոթորիկներով «պիտի լուծվի»: Պետք է ասել, որ խարաղանելով կապիտալիստական կարգերը՝ Նալբանդյանը շատ ընդհանուր դիտողություններ է նետում ապագա կարգերի մասին: Նա որոշ չափով հաշտվում է մասնավոր սեփականության պաշտպանողների հետ: Նրա ապագա հասարակության մեջ մնում են անխախտ մասնավոր սեփականության ուրիշ տարրեր: Պաշտպանելով «հողի համայնացման» պոստուլատը՝ նա ցանկանում է այդ ձևով կովել «աղքատության» դեմ: Բնորոշն այն է, որ դերցենյան հայտնի թեզը Նալբանդյանը նոր ձևով է հիմնավորում: Գերցենը գտնում էր, որ հակառակ կապիտալիստական Եվրոպայի, գյուղացիական Ռուսիան կարող է ավելի շուտ և ավելի հեշտ հասնել «սոցիալիզմին»: Նալբանդյանը, հակառակ Գերցենի, կանգ է առնում կապիտալիստական Արևմուտքին հատուկ ներհակություններից ազատ Ասիայի վրա: Նա գտնում է, որ Ասիան կարող է ապահովել «ժողովրդի մեծամասնությունը» սոցիա-

լական շարիքներից, սովից, շքավորությունից: Որպեսզի Ասիայում ևս չկրկնվի Անգլիայի կամ Ֆրանսիայի «սխուր պատմությունը», գրում է Նալբանդյանը, անհրաժեշտ է հողը համայնացնել և աղագա շարիքների առաջն առնել:

Ասղագայի մասին նետված այդ ակնարկները, իհարկե, հակասական են և առաձգական: Նալբանդյանը շատ խոշոր մտածող լինելով՝ արձագանքել է իր օրերի հայրենի իրականության հակասություններին շատ յուրահատուկ ձևով: Նա չի կարողացել ազատագրվել 60-ական թվականների հայ դեմոկրատների մտայնությանը հատուկ հակասություններից: Շատ ավելի ուժեղ և հետևողական է դառնում նա, երբ ծանրանում է արևմտյան պետությունների էություն, բաղաքականության, տնտեսական-քաղաքական բայցերի վրա: Թուրքիայում գործող արևմտյան միսիոներները, գրում է նա բանտից, ամենևին չեն տարբերվում Հնդկաստանում և Ճապոնիայում գործող միսիոներներից: Նրանք «մեծամեծ ուճիկներ են ստանում և կանխիկ դրամով կամ անգլիական դեսպանության հովանավորությամբ զնված դավանափոխ անձերի թիվը ավելացնելով», օժանդակ ուժ են հանդիսանում կապիտալիստական Ալեքսանդրի համար: Քիչ հետո նա նկատում է. «Անգլիական և ֆրանսիական կառավարություններն իրենց օգտին են ծառայեցնում» այն հանգամանքը, որ հայերը Թուրքիայում անպաշտպան են: Այդ կառավարությունները հանդես են գալիս քրիստոնյաների պաշտպանների դերում և այդ ձևով առաջ են տանում իրենց քաղաքականությունը:

Նալբանդյանը արտասահմանում մերկացնում է ավանտյուրիստ կուսիչյանին: Այդ մերկացումները մեծ տպավորություն են թողնում հատկապես պոլսահայ գործիչների շրջանում: Իր գործունեության սկզբնական շրջանում կուսիչյանը

կապված էր ցարական կառավարության հետ: Հեռագայում նա կապվում է ֆրանսիական կառավարության, հայ կաթողիկոսի ամիրանների, ամիրայական հրապարակախոսների հետ: Մխիթարյան գործիչներից Հյուսիսային Եվրոպայի է անում հիմնավորել Լուսինյանի ավատական-ժառանգական իրավունքները: Երբ պարզվում է Լուսինյանի իսկական դեմքը, ամիրայական հրապարակախոսների կացությունը դառնում է բավական զավեշտական: Հետաքրքրական է այն, որ այդ հրապարակախոսներից մեկը նույնիսկ աշխատում է կապել Լուսինյանին լոնդոնյան էմիրանների հետ: Նալբանդյանը դատական հարցաքննության ժամանակ շատ պարզ հայտնում է, որ Լուսինյանը «շառլատան» է և անգլիական կառավարության «ազենտ»: «Ոչ մեկ հավատ, — ասում է Նալբանդյանը, — ո՛չ այդ շառլատանին, ո՛չ էլ նրա ազենտին, ես չեմ ընծայում...»: Նալբանդյանի «Երկրագործության» մեջ կան տողեր, որոնք լեցուն են գերցենյան գրություններին հասուկ «կրակով»: Այդօրինակ տողերի մեջ ավելի ցայտուն գծերով նշմարվում է ուս հեղափոխական-դեմոկրատ գործիչների հետ կապված մարտնչող հայ հրապարակախոսի խոհուն ու խիղախ դեմքը: Ես կանգ կառնեմ միայն այն տողերի վրա, որոնք նվիրված են գաղութավայրեր զավթող արևմտյան կապիտալիստական պետությունների և դրանց հետ կապված ցարական բռնապետության բռնապարտմանը: «Սոքա ամենքը, իբրև բռնի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում, և ոչ ոք չի հարցնում աշակերտի կամքը՝ կամի՞ արդյոք ուսանել ինչ ոչ: Սակայն չէ պիտո աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթությունից: Բանտերն են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դատախարակները, շղթան՝ հրահանգիչ զորքը, աքսո-

րը՝ բարոյականությունը վերին աստիճանի կաղզուրելու մար-
դարան, կախաղանը և գլխադարձութեան խայտառակ սյու-
նը՝ «Դուռն ճշմարիտ, որ տանի ի կեանս յաւիտենականս»:

Ժողովուրդների եղբայրության մասին էր երազում Նալ-
բանդյանը, երբ գրում էր այդ տողերը: Հայ աշխատավոր ժո-
ղովրդական պանդխտներին նա կոչ էր անում ամենասերտ
կերպով կապվել հին աշխարհի դեմ ըմբոստացող հեղափո-
խականների հետ, դառնալ ալեկոծվող մասսաների մեծ հոր-
ձանքի ալիքներից մեկը:

Նալբանդյանի կացությունը շատ դժվարին էր: Հեղա-
փոխական-դեմոկրատական ռուս զործիշների հետևող էր նա:
Աշխատում էր հեղափոխական գաղափարներ ատարածել հայ
իրականության մեջ, բայց ինքն էլ տեսնում էր, որ այդ
իրականության մեջ ցրիվ ու անկաղմակերպ են հայ դե-
մոկրատիայի շարքերը: Նա իր հույսերը կապում էր հեղա-
փոխական-դեմոկրատական շարժումների հաղթանակի հետ:
Սակայն տեսնում էր, որ այդ շարժումները ջախջախվում են
ու թուլանում: Հարազատ իրականության մեջ նա ուներ
երկրպագուներ և բարեկամներ, հետևողներ և զինակիցներ:
Այնուամենայնիվ, հետևողների որոշ շարքերը հաճախ լիո-
վին չէին հասկանում նրան ու չէին էլ կարող հասկանալ: Այդ
հետևողների համար Նալբանդյանը սոսկ հայ հայրենասեր
էր, մշակութային զործիշ, բռնակալների և «ասիականու-
թյան» դեմ մարտնչող խիզախ անհատ:

Նալբանդյանի թշնամիների «կուսակցությունը» ուժեղ
էր: Կադարյանները Ռուսիայում և ականավոր ամիրանները
Թուրքիայում կանգնած էին այդ «կուսակցության» թիկուն-
քին: Ցարական ժանդարմները և սովթանական համհարդնե-
րը պաշտպանում էին հետադիմական հոսանքի ջահակիրնե-

բին: Տերոյկենց-Չամուռճյանը և Գաբրիել Ալվադովսկին մերթ զադափարական պայքար էին մղում, մերթ պրոֆեսիոնալ մատնիչներին հատուկ եռանդով «նախադգուշացնում» ցարական և սովթանական պամփոներին: Ամեն ինչ գործադրվում էր դրանց ջանքերով:

Չնայած այդ ամենին, պահպանողականների «կուսակցությունը» չի կարողանում «ուժեղ դիրքեր» զբաղել հայ հասարակական միջավայրում: Պարբերաբար նա հարվածներ է ստանում:

Բավական ուժեղ և շոշափելի հարված է ստանում այդ «կուսակցությունը» Նոր Նախիջևանում: Այստեղ, Նալբանդյանին մոտիկ զինակից Հայրապետյանը կազմակերպում է առաջադեմ քաղաքացիների շարքերը: Քաղաքային համայնքի հայտնի ներկայացուցիչները որոշում են հանում արաբաստման ուղարկել Նալբանդյանին և նրան հանձնարարել ստանալ Հեղկատառնում Բաբաջանյանի կտակած հսկայական գումարը: Այդ որոշումը զորավոր հարված էր՝ ուղղված կղիքական կուսակցության դեմ:

Երկրորդ ուժեղ հարվածը հայկական հետադիմության ջահակիրները ստանում են 1862 թ.: Երբ Նալբանդյանը ձերբակալվում և բանտարկվում է, հայ պահպանողականները առաջին նվազ ոգևորվում են և ձգնում նոր թափ հաղորդել իրենց արշավին: Հայրապետյանը և նրա զինակիցները շեն հուսահատվում և շեն նահանջում իրենց դիրքերից: Նրանք ախտիվ կերպով շարունակում են պաշտպանել Նալբանդյանին: Սկնատական գործի մեջ կա նշանակալից մի վավերագիր: Դա այն հայտարարութունն է, որ կազմել էին Նոր Նախիջևանի բազմաթիվ քաղաքացիներ Նալբանդյանի մասին: Ըստ էության այդ քաղաքացիները բացորոշ հայտարարում

էին, որ իրենց համար կախնաւորված նալբանդյանը հարգելի անձնավորութիւնն է: Հեշտ չէ ցարական բռնապետութեան դաժանագոյն օրերին ձեռնարկել այդպիսի մի բայ: Նալբանդյանը քաղաքական «հանցավոր» էր համարվում և Ալեքսեւեյան Ռաւելիինի կախնաւոր էր: Նախիջևանի հույ քաղաքացիները իրենց ստորագրութիւններով վստահութիւն էին հայտնում նրան և բացորոշ հանդես դալիս որպէս կառավարութեան յշնամու հովանավորներ և պաշտպաններ: Իսկական և շատ ազդու փաստ էր դա: Թերագնահատել Նախիջևանի քաղաքացիների կուլյթի նշանակութիւնը չէին կարող ո՛չ կառավարական բարձր շրջանները և ո՛չ էլ, մասնաւոր, Նալբանդյանի մոլեղին թշնամիները: Սակայն զրանց համար այնքան էլ նպատակահարմար չէր ռեֆորմների շրջանում ստեղծել ավելորդ աղմուկ և բացերէ ընդդէմ կատարված անհրապույժ դեպքի իրական իմաստը: Այդպիսով՝ Նալբանդյանի բանտարկութիւննից հետո հասարակական կշանքը չի մարում: Պալքարը շարունակվում է:

Հայտնի է, որ 1865 թ. Թիֆլիսում բռնկվում է արհեստավորների շարժումը, որն ուղղված էր մեծահարուստ վաճառականների և ապա, մի որոշ չափով, կառավարութեան դէմ: Բնորոշ է այն, որ վրաց գործիչ Նիկոլաձեն Գերցենին ուղարկած իր թղթակցութիւնների մեջ, նկարագրելով 1865 թ. շարժումը, կանգ էր առնւ ապստամբութեան հակահաւատարական բնույթի վրա: Այդ թղթակցութիւնները ժամանակին լույս են տեսել «Կոլոկոլի» էջերում:

Միևնույն ձևով է մոտենում ցարական կառավարութիւնը նաև Նալբանդյանի հանդիսավոր թաղման առթիւ կաղմակերպված ժողովրդական լայնածավալ ցույցի հետաքննութեանը և մեկնաբանութեանը:

Այժմ մենք հնարավորութիւն ունենք Նալբանդյանի երկերի տկաղեմիական հրատարակութեան շորրորդ հատորի մեջ ամփոփված պաշտօնական վավերագրերի հիման վրա նկարագրել 1866 թ. այդ ցույցը:

Նալբանդյանը 1866 թ. ապրիլին մեռնում է Կամիշինում, նրա մարմինը կառավարութեան թուլտուլութեամբ տարվում է Նախիջևան: Նոր Նախիջևանի քաղաքացիները հատուկ պատվիրակներ են ուղարկում Կամիշին: Նալբանդյանի դիակը Վոլգայով փոխադրվում է Դոն և նախով մայիսի սկզբին հասցվում Նախիջևան: Հայրապետյանի կարգադրութեամբ կազմակերպվում է հսկայական ցույց: Եկեղեցիների ղանգերը տխուր դուշը հաղորդում են աշխատավորներին: Դոնի ափին դազադը դիմավորում են արտասովոր հարգանքով, երաժշտութեամբ՝ քաղաքի համարյա ողջ բնակչութեան մասնակցութեամբ: Փոխգնդապետ Յանովը իր զաղտնի ղեկուցադրի մեջ (ուղղված ժանգարմաների շեֆին) հաղորդում է, որ հասուի կարգադրութեան համաձայն Նալբանդյանի դիակը տանում են քաղաքից 5 վերստ հեռավորութեան վրա գտնվող վանքը և այդտեղ թաղում: «Վանքի վարդապետը, — գրում է Յանովը, — իր դամբանական ճառում հանդուցչալիս անվանել է անմեղ նահատակ»: Շեշոված հանգամանքները նկատի առնելով՝ Եկատերինսկայի նահանգապետը գտնում է, որ Նալբանդյանի թաղումը կառավարութեան դեմ ուղղված ցույցի բնույթ ունի, և հանձնարարում է Ռոստովի ոստիկանապետին այդ մասին պատշաճ քննութիւն կատարել: Հետաքրքրական է այն, որ Նախիջևանի հոգեւոր կառավարութեան անդամ Շապոշնիկովը (բահանան) հայտարարում է, որ նա իր տված անկեղծ ցուցմունքների համար «ենթարկվել է Նախիջևանի քաղաքագլուխ Հայրապետովի, ավագ քահանա Բալբանովի

և այլ անձանց հալածանքներին»։ Ժանդարմական պետ կապիտան Բելոցերիկովսկին իր ղեկուցադրի մեջ հայտնում է, որ «առաջ քահանա Շապոշնիկովը իր նվիրվածությամբ կառավարությանը և Նալբանդովի թաղման մասնակցած անձանց հանցագործությունների մեղակացումով արժանի է առանձին ուշադրության և հովանավորության»։

Պաշտոնական այդ վավերագրերը անհնարին է անուշադրության մատնել։ Նալբանդյանի բարեկամները և համակիրները կարողանում են, ինչպես տեսնում ենք, հսկայական ցույց կազմակերպել և ստեղծում են մեծագույն իրարանցում էստաբլիական շրջաններում։ Ցույցը լինում է այնքան աղքատ, որ այս անգամ կառավարական օրդանները նախ ստիպված են լինում քննություն նշանակել և մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ցույցի հետ կապված հանգամանքները, իսկ հետագայում՝ կոծկել ամբողջ գործը։ Վերջին որոշումը բնորոշ է։ Նախնական քննությունը պարզել էր, որ ցույցը, հիրավի, մեծ է եղել, իսկ ցույցի ղեկավարների վարքագիծն էլ բավական որոշ։ Ինչ իմաստ ունի այդպիսի պարզանքների ավելորդ իրարանցումը։ Դատավարությունը կամ սենատական նոր քննությունը կժողովրդականացնե՞ր ամենից առաջ միևնույն Հայրապետյանին և Նալբանդյանի բարեկամներին։ Միաժամանակ հասարակական լայն շրջաններում այդ դատավարությունը կարող էր ստեղծել անբավականություն և հակակառավարական ուրույն շարժում։ Ցարական պաշտոնյաների բռնած դիրքը պարզ էր։

Նալբանդյանի հետեողները կամ նրան համակրողների շրջանները կարող էին նույնիսկ նետվել ուսու ընդդիմադրական հոսանքների դիրքը և ուժ տալ հակապետական հոսանքներին։ Ըստ երևույթին այդօրինակ շարժառիթներն են թե-

լադրում կառավարական օրգաններին՝ կոծկել ամբողջ գործը
և քննիչների ղեկուցադրերը նետել արխիվ:

Նալբանդյանական «կուսակցությունը» նորից ստանում է
շոշափելի հարված: Կղերական գործիչները ստիպված են լի-
նում բռնել նահանջի ուղին:

Նալբանդյանի երկերի հրատարակությունը արգելվում է:
Սակայն Նալբանդյանի անունը դառնում է խորհրդանիշ հայ
ընդհատակյա խմբերի և հասարակության առաջավոր շրջան-
ների համար: Տպագրվում են Նալբանդյանի «Ազատություն»
բանաստեղծությունը և դիմանկարը: Անլեզալ այդ հրատա-
րակությունը տարածում են Նալբանդյանի անհայտ երկրպա-
ղունները: Մեծագույն թափ է ստանում յուրահատուկ այդ պրո-
պագանդան: Ցարական ժանդարմական օրգանները 70-ական
թվականներին ստիպված են լինում հատկապես Թիֆլիսում
հատուկ քննություն կատարել: Արգար Հովհաննիսյանը որո-
շում է Նալբանդյանի բանաստեղծությունները ղեկեղել իր
«Փորձ» հանդեսի մեջ: Տպագրվում են այդ երկերը: Ցարական
գրաքննիչները սակայն բռնադրափում են տպարանում ար-
դեն շարված թերթերը: Նշանակալից այդ վավերագրերը
դառնում են նախկին Կովկասյան գրաքննական կոմիտեի վա-
վերագրերի պահարանում՝ Սովետական Վրաստանի պետա-
կան արխիվում: Նալբանդյանի երկերի առաջին երկհատոր-
յակը աղավաղված և անչափ կրճատված մի հրատարակու-
թյուն է: Այդ փաստը մեր մամուլի էջերում արձանագրվել է
շատ որոշակի կերպով: Հայտնի է նաև, որ Նալբանդյանի
ընթերցողները շատ հաճախ արտագրում էին «Ներկրագործու-
թյունը» և ապա տարածում ձեռագիր օրինակները: Բաղմա-
թիվ այդպիսի հրատարակություններ են հայտնի, որոնք տա-
նալին ունումնասիրված չեն անհրաժեշտ չափով:

Մ. Նալբանդյանը, որպես հայ խոշոր հեղափոխական-դեմոկրատ և լուսավորիչ, իր լիակատար գնահատականը ստանում է միայն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո: Ներկայումս արդեն ավարտվել է ու հրատարակվել Նալբանդյանի երկերի սովորաժամալ չորս հատորներից բաղկացած ժողովածուն: Ակադեմիական այդ հրատարակությունը, ինչպես նաև սովետահայ բանասերների պրպատմները, անշուշտ, մեծագույն չափով կօժանդակեն Նալբանդյանի կյանքի տակավին քիչ ուսումնասիրված էջերի ճշգրիտ լուսաբանությանը: Հրապարակված նյութերը այնքան հարուստ են, որ լիովին հնարավորություն են տալիս բարև-խիղճ ընթերցողին արձանագրել Նալբանդյանի պատմական խոշոր դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ:

Հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների փայլուն պանթեոնում Նալբանդյանը եղակի տեղ է գրավում ամենից առաջ որպես հեղափոխական մտածող, դեմոկրատ-լուսավորիչ, ժողովուրդների բարեկամության աննկուն պրոպագանդիստ: 60-ական թվականների ուս հեղափոխական-դեմոկրատների նման գործիչ էր նա: Գրասեր էր և էրուդիտ: Էնցիկլոպեդիական գիտելիքներ ուներ: Հետազոտել էր իր օրերի բնագրիտության և հասարակագիտության ներկայացուցիչների ուսումնասիրությունները աշալուրջ գիտնականին հատուկ ուշադրությամբ: Կանգնած լինելով մատերիալիզմի դիրքերի վրա, նա աշխատում էր տեսականորեն հիմնավորել իր հասարակական-քաղաքական և գրական-գեղարվեստական սկզբունքները: Նրա կյանքի այդ գրվագները գրավում են ընթերցողի առանձին ուշադրությունը:

Ամենասիրելի հեղինակներն են նրա համար Բելինսկին, Դոբրոլյուբովը, Զերնիշևսկին: Լոնդոնում նա դառնում է Գերցենի և Օգարևի մտերիմ բարեկամը: Տեսնում ենք նրան Իտալիայում, զարիբաղիականների կողքին՝ Վերդիի «Տրուբադուրի» հրատարակությունը ձեռքին: Հնդկաստանում նա հավաքում է նյութեր ադատախոհ հայ գործիչ Թադիադյանի մասին և դիտում ծովափին ափիոնի բեռներով բարձված նավերը: Ստամբուլի և Զմյուռնիայի հայ ժողովուրդները պատմում են նրան Զեյթունի ապստամբների մասին: Ստեփան Ոսկանը Փարիզում նկարագրում է Մոնմարտը, Լատինական թաղամասի ուսանողներին, Հուլիսյան հեղափոխության զրվագները, Տյուլերի պալատի դռավումը: Ինքը՝ Ոսկանը, այդ օրերին ֆրանսիական ցուցարար ուսանողների շարքերում դրոշակակիր էր: Նոր ապրումներով, նոր հուշերով ու հույզերով, նոր զենքերով զինված՝ Նալբանդյանը վերադառնում է հայրենիք և ձերբակալվում:

Նալբանդյանի վերջին կացարանը դառնում է Ալեքսեյանի միավելինը...

Հեղափոխական հայրենասերի և մեծ հումանիստի երկերի էջերի մեջ գծադրվում են անցյալի բոլոր այդ ցնցող դեպքերն ու զրվագները: Հիմնական մի գիծ ավելի ցայտուն կերպով է երևում հրաշունչ այդ էջերի և տողերի մեջ: Դա նրա ամուր կապն է 60-ական թվականներին ուսա հեղափոխական-դեմոկրատների հետ: Ամենինն պատահական չի կարելի համարել այն, որ Նալբանդյանը, ձայնակցելով Զերնիշևսկուն, ամենակտրուկ կերպով որոշում է իր զիրքը հին օբսկուրանտների, նացիոնալիստների, ռասիստների դեմ: Մոլինարիի քաղաքատնտեսության դասընթացը նա ղեն է նետում՝ համակված անսահման զայրույթով: Մոլինարին գտնում էր, որ

ժանտախտը, մահը, կոտորածները «անհրաժեշտ վիրաբույժ-ների» դեր են կատարել խավար անցյալում և կրճատելով բնակչության քանակը՝ նույնպես ժողովուրդների բարեկեցությանը: Մոլինարին, ձայնակցելով Մալթուսին, առաջարկում էր սահմանափակել արհեստական միջոցներով աշխատավորների թիվը: Յինիկորեն նա նույնիսկ մեծարում էր «ժանտախտի» նման «վիրաբույժներին»: Հնօրյա մարդակերական դրուժները հիմնավորվում էին հիալերյան մարդակերների կողմից: Այսօր նույն այդ վայրագ «պատգամները» պաշտպանում են իմպերիալիզմի անգլո-ամերիկյան լակեյները իրենց կեղծ գիտական դրոժյունների մեջ...

Հեռու անցյալում Նալբանդյանը անգույ մարտեր է մղել հետադիմության բոլոր դադափարախոսների և դրանց հետ էպպված ռասիստների դեմ: Ժողովուրդների ազատագրության և ժողովուրդների եղբայրության դրոշն է պարզել նա: Կոփել է հայ ժողովրդի շարքերը և ձայնակցել XIX դարի 60-ական թվականների ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարներին: Խորունկ և շատ ուր ահոս է փորել նա հայ ժողովրդի գիտակցության մեջ:

Այսօր Հայաստանը երկրագնդի ամենահզոր սոցիալիստական պետության՝ մեծ Սովետական Միության անբաժան հատվածն է:

Հայ ժողովուրդը կուսում է նոր կյանքի լուսավոր շենքեր՝ միաձուլված սովետական եղբայրական ժողովուրդների շարքերի հետ ու զինված Հենինի պողպատե կուսակցության հեղափոխական պատգամներով:

Աննկուն և կորովի Նալբանդյանի անունը սիրով ու մեծագույն ակնածանքով է նշում այսօր իր դարավոր կապանքներից ազատագրված հայ ժողովուրդը:

ՄԻՓԱՅՆԷՆԻ ՆԱԼԹԱՆԴՅԱՆ

Հայ ժողովուրդը Միության բոլոր ժողովուրդների հետ միասին նշում է հայ մեծ հեղափոխական-գեմոկրատ, մարտրենոզ մատերիալիստ, աշխատավորների ազատագրության համար մղված պայքարի անվահեր մարտիկ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը:

Միքայել Նալբանդյանը բացառիկ տեղ է զբաղում հայ հասարակական մտքի պատմության մեջ: Նա հրատարակել է հրապարակախոսական, գրական-քննադատական, պատմական և լեզվագիտական աշխատություններ, գրել է գեղարվեստական արձակ երկեր ու բանաստեղծություններ: Նրա «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ արծարծված քաղաքական և տնտեսագիտական մտքերը զբաղել ու զբաղում են տնտեսագետների առանձնահատուկ ուշադրությունը: Նշանակալից դիտողություններով լեցուն են Նալբանդյանի անշափ ուշադրով բանտային նամակները:

Միքայել Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքները կազմավորվել են ուսումնական-գեմոկրատների՝ Բելինսկու, Գերցենի, Օգարյովի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու ազդեցության ներքո:

Ռուս սովետական բանասերները և պատմաբանները վերջին տարիների ընթացքում առանձնապես հսկայական աշ-

խատանք են կատարել XVIII դարի առաջավոր մտածողների և XIX դարի 40—60-ական թվականների հեղափոխական-դեմոկրատների՝ Բելլինսկու, Գերցենի, Օգարյովի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու, Նեկրասովի կյանքի և գործունեության գիտական ուսումնասիրության ուղղությամբ:

Միքայել Նալբանդյանի կյանքի և հայացքների բնութագրման ու լուսաբանության համար կարևորագույն նշանակություն ունեն թե՛ նշված ուսումնասիրությունները, թե՛ XIX դարի 40—60-ական թվականների հասարակական շարժումների, գիտական ու գրական հոսանքների և թե՛, մանավանդ, ուստ պարբերական մամուլի պատմության մասին հրատարակված վավերագրերն ու հետազոտությունները: Սովետահայ գրականագետները և պատմաբանները քիչ աշխատանք չեն կատարել և համեմատաբար կարճ ժամանակաշրջանում մեծագույն թափ են հաղորդել նալբանդյանագիտության զարգացմանը:

* * *

Միքայել Նալբանդյանը ծնվել է Նոր Նախիջևանում, 1829 թ. նոյեմբերի 2-ին: Հարավային Ռուսաստանի այդ բաղաբաժնում է ապրել նա մանկության և պատանեկության տարիներին: Այստեղ նա ստացել է իր նախնական կրթությունը և ապա ինքնակրթության միջոցով դարձել ակտիվ քաղաքացի և առաջավոր մտածող:

Նոր Նախիջևանը անցյալում շատ սերտ կերպով կապված էր ո՛չ միայն մերձակա խոշոր առևտրական քաղաքների (Ռոստով, Տաղանրոգ), Հարավային Ռուսաստանի և Ղրիմի քաղաքատիպ ավանների, այլ նաև Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերի (Ստավրոպոլ, Ղզլար, Մոզդոկ) հետ:

Նախիջևանի հայ բնակչությունը միատարր զանգված չէր։ Քաղաքում աչքի էին ընկնում ներհակ սոցիալական խավերը և հատկապես հասարակական խմբակցությունները։ Հայ դրամատիրական և առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները կապված էին ուսական շուկաների, կապիտալիստների, կալվածատերերի, ինչպես նաև ցարական-վարչական մարմինների հետ։

XIX դարի 40—50-ական թվականներին սոցիալական շերտավորման պրոցեսը դառնում է ավելի սուր։ Այդ ժամանակ քաղաքի արհեստավորները, մանր առևտրականները, մանավանդ գյուղական աշխատավորները անկազմակերպ լինելով հանդերձ, պայքար էին մղում քաղաքային պրուտոկրատիայի դեմ և ձգտում պաշտպանել իրենց ոտնահարված իրավունքները։ Նախիջևանյան քաղաքային համայնքում 40—50-ական թվականներին կազմավորվում են ճեմհակ հոսանքներ, որոնք արտահայտում էին սոցիալական հակամարտ խավերի շահերն ու տենդենցները։

Կասկածից դուրս է, որ ցարական բռնապետության և կաթիլիկոսության հետ կապված իշխող պահպանողական «հոսանքի» ներկայացուցիչները եղել են ֆեոդալական-ճորտատիրական կարգերի համոզված պաշտպաններ։ Ակներև է այն էլ, որ հայկական հեռագրիմական այդ «կուսակցության» դեմ պայքարող կամ ծառացող հայ դեմոկրատական «կուսակցության» ներկայացուցիչներն իրերի զարգացման ընթացքում արդեն ստիպված պիտի լինեին կալի ելնել ոչ միայն առանձին խոշոր հայ աղաների կամ քաղաքային օլիգարխիայի, այլ հաճախ նաև ցարական կառավարության ներկայացուցիչների՝ նահանգապետի, ոստիկանապետի, ժանդարմապետի դեմ։ Հայտնի է, որ ցարական բռնակալության ներկայա-

ցուցիչները բացահայտ կերպով պաշտպանելով Նախիջևանի օլիգարխիայի իրավունքները՝ հալածում էին առանց վարանումների նույնիսկ լեզալ ձևով, լոյալ ձևով հայկական օլիգարխիայի դեմ ծառացող առանձին գործիչներին: Բե ուրբան «հետեողական» էր ցարական կառավարության «կուրսը» հաեկապես այդ ուղղությամբ, ցույց է տալիս Գաբրիել Պատկանյանի դեմ հալիբյանի նախաձեռնությամբ կազմակերպած հալածանքների արտասովոր պատմությունը:

Ահա մոայյագույն ալդ մթնոլորտում էլ Նալբանդյանը կոփվում է ու հասունանում, որպես նախիջևանյան հայկական պլուտոկրատիայի դեմ ծառացող նոր, առաջադիմական հոսանքի մարտիկ, որպես առաջավոր լուսավորիչ և ազատախոհ մտածող, Պատանկության տալիներին նրան արդեն հայտնի էին հայրենի բաղաքի նախորդ գեպքերը, սոցիալական սուր բախումները, հակամարտ հոսանքների ծրագրալին և տակտիկական սկզբունքները, բախվող ուժերի ուրույն գաղափարախոսները և հետեողները:

Ցարական կառավարական օրդանների՝ դատարանների, ուսուկանության, ժանդարմերիայի ղեկավարների հետ կապված հայ խոշոր կապալաու-կապիտալիստ և ճորտատեր-կարլաճատեր հալիբյանի հետադիմական «կուսակցության» դեմ պաղքարող հայ բուրժուա-դեմոկրատական «կուսակցության» հիմնական ղեկավարն այդ ժամանակ լուսավորչական և դեմոկրատական հովերով համակված վաճառական Հայրուպետյանն էր: Նա առաջադեմ գործիչ էր: Նախիջևանցի մի ուրիշ վաճառականի հետ միասին Հայրապետյանը նշվում է Մոսկվայի առաջավոր բնագիտական ընկերություններից մեկին օժանդակող գործիչների ցուցակում: Ահա հենց այդ Հայրապետյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ կաղ-

մակերսդված նոր շարժմանն էլ հարում է նալբանդյանը նոր նախաիջևանում:

Նալբանդյանի կաջովյունը հայրենի բաղաբում դառնում է բավական ծանր և անելանելի: Առաջովն իրեն նալբանդյանի և կաթողիկոսի հետապնդումներից կամ հալածանքներից, նալբանդյանը չէր կարող ո՛չ Քիշինեում և ո՛չ էլ, մանավանդ, նոր նախաիջևանում: Մնում էր միայն մի ուղի: Անհրաժեշտ էր շուտափույթ կարգով թողնել հայրենի վայրերի ահամանները և ուղևորվել Մոսկվա: Այդտեղ նա կարող էր ալիլի ապահով փնտկ ստեղծել իր համար: Վերջապես՝ մալբաբադաբում նա կարող էր վերջնականապես իրագործել իր վաղեմի ծրագիրը՝ ստանալ բարձրագույն կրթովյուն և լիովին յուրացնել ռուս առաջավոր մշակովթի, գիտովյան և գրականովյան բարձր արմեքները: Այդպես էլ վարվում է նալբանդյանը, 1853 թ. հուլիսի 6-ին մեկնելով նախաիջևանից Մոսկվա:

Մոսկվայում Մ. Նալբանդյանը սկզբնական շրջանում հովանավորներ է գտնում կաղարյան ճեմարանի ղեկավարների շրջանում, որն ուներ իր ուրույն պատճառները:

Կաղարյան ճեմարանի ղեկավարները 1853 թ. դիտավորյալ կերպով բարյացակամ վերաբերմունք էին մշակել նալբանդյանի նկատմամբ: Անցնում է ընդամենը մի տարի, և այդ դիրքը բավական որոշակիորեն փոխվում է: Պարզվում է, ռուս երեւովթին, որ նալբանդյանը Պետերբուրգում և Մոսկվայում ուրույն կապեր կամ հարաբերովյուններ է հաստատել «անբարեհույս» ռուս գործիչների հետ: Երբ 1854 թ. հուլիսին նալբանդյանը Մոսկվայի համալսարանին է հանձնում Պետերբուրգի համալսարանի վկայականը, նրան առաջարկում են ներկայացնել նաև ռուսական կաթողիկոսի հատուկ վկայական: Մոսկվայի համալսարանի

վարչութիւնը հայտնում է Նալբանդյանին, որ դասախոսութիւններ լսելու համար, նույնիսկ ազատ ունկնդիր, պարտավոր է «բացատրութիւն ներկայացնել, թե դասախոսութիւններ լսելու դեմ արգելքներ չկան» (Խճիկլան, Տարեգրութիւն, էջ 59): Մեկ ուրիշ վավերագրի մէջ կարդում ենք, որ սկզբում Դիւլանովը «խոստացել էր Նալբանդյանին պաշտպանել ապօրինի հալածանքներից, բայց քիչ ժամանակ անցած, նա... դարձավ Նալբանդյանին հալածողը» (էջ 60): Նալբանդյանը 1854 թ. սեպտեմբերի 2-ին նորից դիմում է Մոսկվայի համալսարանի ռեկտորին և վերստին պատասխան է տալով, որ «դիմումը մերժվում է»: Սեպտեմբերի 11-ին նա «ազատվում է» ուսուցչի պաշտոնից: Սեպտեմբերի 16-ին արդեն կարգադրութիւն է արվում, որ Նալբանդյանը «ազատի ճեմարանի շէնքում իր գրադեցրած բնակարանը»: Սեպտեմբերի 23-ին Հովհ. Լազարյանին ճեմարանի ռեկտորը հայտնում է, որ «Նալբանդյանը ճեմարանից բոլորովին հեռացել է, դադարեցվել է աշխատավարձի վճարումը և ճաշարանից օգտվելը»: Երբ Նալբանդյանը դիմում է ռեկտորին ու խնդրում վկայական «Մոսկվայում ապրելու իրավունք ունենալու համար», այդ դիմումը ևս մերժվում է: Սակայն իրականում Նալբանդյանը դասախոսութիւնները լսում էր որպէս «ազատ ունկնդիր»: Անցնում է որոշ ժամանակ, և Նալբանդյանը նորից ստիպված է լինում անակնկալ կերպով հեռանալ համալսարանից: Իսկական պատճառներն այսօր էլ հայտնի չեն, բայց կարելի է ենթադրել, որ Նալբանդյանին համալսարանական վարչութիւնը նորից առաջարկել է ոստիկանական չոր վկայագիր ներկայացնել:

Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում 1854—1856 թթ. Նալբանդյանը կարող էր տեսնել Բրեդիխինին,

Բոստկինին, Բորոգինին, Մենդելեևին, առաջավոր շատ գործիչների և հեղափոխական հովերով տոգորված ուսանողների։ Այդ ժամանակ լայնորեն հայտնի էին Գրիգորովիչի, Տուրգենևի, Նեկրասովի, Միխայլովի և շատ ուրիշ առաջավոր ռուս գրողների երկերը։ Ահա այդ մթնոլորտը շատ մեծ ազդեցություն է թողնում երիտասարդ Նալբանդյանի, ինչպես նաև Լրիու մալրաքաղաքներում ապրող հայ առաջավոր ուսանողների վրա։ Միսալ կլինիր, իհարկե, ասել, թե Նալբանդյանը Նոսնովա հասնելուն պես, իսկույն մոտենում է հեղափոխական-դեմոկրատներին և արագընթաց կերպով յուրացնում է նրանց հայացքները։ Սակայն նրա մտահայեցությունը 1853 թ. այնպես էր, որ նա շատ հեշտ կարող էր մոտենալ ռուս առաջավոր ուսանողներին, յուրացնել առաջադեմ գրողների հայացքները և ապա մոտենալով արմատական-դեմոկրատական մտածողներին, կապվել հեղափոխական-դեմոկրատներին։ Շատ բնորոշ են Նալբանդյանի սկզբնական շրջանի (1850—1855) բանաստեղծությունների թիմաները—«Չերքեզի երգ» (Պուշկինից), «Կյանք», «Ուսանող և մեծատուն», «Մարգարե», «Վեճ» (Լերմոնտովից) և այլն։ Ավելի քան պարզորոշ է, որ Պուշկինը, Լերմոնտովը և ռուս առաջավոր մյուս գրողները նրա համար իմաստավից նոր խոսքի քարոզիչներ էին։

Նալբանդյանի գրադարանի զրբերը հնարավորություն են տալիս հետևել նրա անցած ուղեգծին։ Թերթելով այդ գրքերը՝ մենք տեսնում ենք լուսավորիչ գործչին, Գրանովսկու տաղանդավոր դասախոսությունների ջերմ ընթերցողին, ապա Գերցենի, Օգարյովի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու՝ ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատների դիտակետը յուրացնող խիստ մտածողին։ Միևնույն նշանակալից մտավոր էվոլյուցիայի արտացոլումը մենք նկատում ենք նաև «Հյուսիսա-

փայլի»՝ ղանաղան համարների մեջ: «Հյուսիսափայլի» հրա-
 տարակության սկզբնական շրջանում Նալբանդյանը միայն
 սկսում է մոտենալ մատերիալիստական հայեցողության տեսա-
 կան սկզբունքներին: Ապա նրա բայերը դառնում են հետզհե-
 տի ավելի կտրուկ և պարզորոշ: Որքան էլ ծանր լինեին գրա-
 քննության պայմանները, Նալբանդյանը աստիճանաբար դառ-
 նում է այնքան հմուտ ժողովրդատ, որ կարողանում է հենց
 «Հյուսիսափայլի» էջերում յուրահատուկ եզոպոսյան և երկ-
 պլան լեզվով մոտենալ հայ կոնկրետ իրականության երե-
 վույթների քննարկմանը և լուսաբանությանը՝ հեղափո-
 խակաՆ-դեմոկրատների մարտական դիրքերից: «Հյուսիսա-
 փայլի» տնօրենը լուսավորիչ-գիտնական Ստ. Նալբարյանցն
 էր, որը Նալբանդյանի համար ժամանակավոր ուղեկից էր
 հայ կղերական հետադիմության և ճորտատիրական-կալվա-
 ծատիրական կարգերի դեմ մղված պայքարի ընթացքում:
 Նալբանդյանի համար «Հյուսիսափայլը» մի հենակետ և դուր-
 ծոն էր լեղալ պրոպագանդայի համար: Նալբանդյանի տակ-
 տիկան չէր կարող անհշմարելի մնալ Նալբարյանցի համար:
 Տեսե՛նելով, որ Նալբանդյանը աշխատում է աշարձել առա-
 ջավոր գիտության սկզբունքները, դիտավորությամբ բնա-
 գիտական հողվածներ է գրում և աշխատում հիմնա-
 վորել մատերիալիզմի պատգամները,— Ստ. Նալբարյանցը
 ջանալով դիմագրավել Նալբանդյանի զաղափարական պրո-
 պագանդային, տղադրում է իր տեսությունները և բացորոշ
 կերպով պաշտպանում Շելլինգի և իդեալիստական փիլիսո-
 փայության մյուս ներկայացուցիչների տեսական սկզբունք-
 ները: Նալբանդյանը հանդես է գալիս որպես «կանանց դա-
 տի» ակտիվ պաշտպան: Նալբարյանցը հանդես է գալիս հա-
 կառակ ուղեգծի պրոպագանդիստի դերում: Նալբանդյանը

կրակոտ ուժով գաղափարական ակտիվ պայքարի կոչ է անում ընդդեմ ճորտատիրութեան, կոչ է անում նետվել հին աշխարհի դեմ, տապալել ցարիզմը, քանդել շղթաները, բարձրացնել ազատութեան դրոշը: Մինչդեռ Նաղարյանցը հնարավոր է համարում դատապարտել նույնիսկ ֆրանսիական առաջին բուրժուական հեղափոխութեան ներկայացուցիչների ուղեգիրը: Նաղարյանցը իդեալիստական իմաստասիրութեանից առնված զենքերով էր մոտենում գաղափարական պրոբլեմների և դրականութեան քննարկմանը: Նալբանդյանի գրական, տնտեսագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական և ուրիշ աշխատութեաններում միշտ էլ լսվում է ուսման հեղափոխական-դեմոկրատների զինակցի մարտական ձայնը: Միանգամայն առանձնահատուկ տեղ է գրավում այդ կողմից հայ գրականութեան, քննադատութեան և գրաէականագիտութեան պատմութեան մեջ նրա բացառիկ արժեք ունեցող գրականագիտական հետազոտութեանը Պերճ Պողոսյանի «Սոս և Վարդիվեր» վեպի մասին: Նալբանդյանը նույնիսկ «Հյուսիսափայլի» էջերում զետեղած իր հոդվածներում աշխատում էր ամենակտրուկ հարվածներ հասցնել կշեռական-ազդայնական գաղափարներին օժանդակող և ուժ տվող իդեալիստական փիլիսոփայութեան սկզբունքներին: Գրականութեանը նրա համար կշանքի և իրականութեան արտացոլում լինելով հանդերձ, կարևորագույն մարտական զենք էր՝ իրականութեան հեղաշրջմանն օժանդակող ակտիվ գործոն: Պոեզիան Նալբանդյանի տեսակետով պետք է նույնպես ամենաանհրաժեշտ շաղկապվել արդիացիոն և հրապարակախոսական աշխատանքի հետ: Նա դիտավորութեամբ, նույնիսկ ինտիմ հուշերի բնույթ կրող իր հայտնի բանաստեղծութեան մեջ մարտական պատգամ է նետում.

Նա պիտի դուրս գամ գեպի հրապարակ,
Առանց քնարի, անղարգ խոսքերով.
Նա պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով...

Նալբանդյանի «Աղատություն» բանաստեղծությունը ժամանակին առաջ է բերել մեծագույն հասարակական արձագանք բոլոր հայաբնակ վայրերում: «Հյուսիսսփյառի» էջերում գեղեղված շատ և շատ քնարական էջեր կրում են «Սովորեմենիկի» մեջ հրապարակված բանաստեղծությունների ազդեցության կնիքը:

Նալբանդյանի վրա կարող էին մեծ ազդեցություն թողնել նաև «Սովորեմենիկի» մեջ հրապարակված Ջերնիշևսկու ակնարկները՝ առանձնապես Գարիբալդիի և Նեստլիի ձիովոր աղջիկների հանդիպմանը նվիրված անշափ պատկերավոր տողերը:

Նալբանդյանի «Հեգելը և նորա ժամանակը» փիլիսոփայական աշխատությունը առաջին անգամ հայ գրականագիտության մեջ բնութագրել է Ալեքսանդր Մյասնիկյանը: Նալբանդյանի այդ աշխատության մեջ երևում է առաջին հերթին Ջերնիշևսկու մարտական գիտակիցը: Փիլիսոփայությունը Նալբանդյանի համար վերացական սկզբունքների մի հանրադրմար չէ և ոչ էլ, մանավանդ, բնագիտությունից կտրված տեսական սխտեմների ամփոփում «...Բարվոքել մարդկային կյանքը՝ ահա՛ փիլիսոփայությունը. ինչ ճամփով կուղես գնա, միայն թե խորհուրդը և նպատակը այդ լինի: Հայտնի է, թե ավելի կարճ, ավելի բնական և ավելի հաջող ճամփան ընտրելի է, քան այն բարակ և միղապատ ճամփաները, որ ցույց էին տալիս այս ու այն փիլիսոփայական համակարգու-

թյունքը...»: Շեշտելով փիլիսոփայական ուսմունքների ուրույն
 կապը պատմական որոշակի ժամանակաշրջանի հետ և կանգ
 առնելով Գրանովսկու աշխատությունների վրա՝ Նալբանդ-
 յանը գրում է նաև հետևյալը. «...Ինչ որ ինձ է վերաբերում,
 ես ո՛չ մի համակարգություն չեմ ընդունում, և ամեն համա-
 կարգությանց ստրկաբար հետևողքը ծաղրից ավելի ուրիշ
 բան թող չսպասեն ինձնից...»: Նալբանդյանի թե՛ այդ աշ-
 խատությունը և թե՛ կարևորագույն հասարակական և դի-
 տական պրոբլեմներ շոշափող բանտային նամակները գրված
 են շատ կտրուկ և առույգ ոճով: Հատկանշական այդ վավե-
 րագրերի մեջ երևում է Բիլինսկու և Գերցենի, Դոբրոլյուբովի
 և Չերնիշևսկու էնտուզիաստ-համախոհի դեմքը: Քննադատե-
 լով Պերճ Պոռշյանի շատ ուրույն դիրքը հնօրյա բարքերի ու
 հետամնաց սովորությունների նկատմամբ, Նալբանդյանը
 գրում է. «...Ի՞նչ կարող են մեզ հիշեցնել միջին դարերը՝
 կործանեմ, գերություն, կոտորած, արյուն, կրակ, սով, խա-
 վար և մահ: Սորա են մեզ համար միջին դարերի բերածը,
 և նոցա բեռի տակ ճնշված է այսօր հայ մարդը. թափել այդ
 բեռը մեր վրայից՝ ահա՛ մեր պործը...»: Միննույն այդ աշ-
 խատության մեջ հայ մեծ հեղափոխական-գեմոկրատ մտա-
 ծողը որոշակի կերպով նշում էր, որ հետու անցյալի իդեա-
 լականացումով ավելի հաճախ տարվում են հայ պահպանողա-
 կան մտավորականության և ո՛չ թե ժողովրդի ներկայացու-
 ցիչները: «...Ժողովուրդը շատ անգամ ավելի ազատ է միջնա-
 դարյան լուծից, քան թե մեր պատվելի գրագետքը... Մեր
 պարոնները անդադար այդ միջին դարերի կպրե կարասում
 լողալով՝ ազգության և լուսավորության անունով, աշխա-
 տում են նորոգել և հաստատել ազգի վրա այդ խավար ուղ-
 դության տիրապետությունը...»: Նալբանդյանի բոլոր աշխա-

սուբյուկտների մեջ հզակի տեղ են զբաղում նրա «Երկրագործություն» տրակտատը և «Երկու տող» հրապարակախոսական կրակոտ աշխատությունը: Իր այդ երկերի մեջ Նալբանդյանը շատ որոշակի կերպով քննադատում և մերկացնում է արևմտյան կապիտալիստական պետությունների ռեակցիոն էությունը: Արևմտյան պետությունների դադութային էքսպանսիան, գրում է Նալբանդյանը, բռնակալ և դիշատիչ ուժերի արշավ է: «...Անգլիան,— կարդում ենք «Երկրագործության» մեջ,— ամիսը երեք շոգենավ փոխում բռնությամբ ներս է տանում Զինաստան, թունավորում մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենավ արծաթ է ստանում. այս անբարոյականություն է...»:

Կանգ առնելով «ազգության» վրա, Նալբանդյանը շեշտում է, որ «խսկական ազգությունը ո՛չ թե ժողովրդին ճշդ ու շահագործող մեծատոնների հավաքույթն է, այլ հասարակ ժողովուրդը»:

Հակասություններից տղատ չէ Նալբանդյանի «Երկրագործությունը»: Դատափետելով կապիտալիստական կարգերը՝ Նալբանդյանը շատ քննադանուր և մշուշապատ գույներով է նկարագրում ապագայի հասարակական-տնտեսական կարգերը:

Ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատների հիմնական գրույթներից մեկը բավական յուրահատուկ ձևով է առաջադրվում «Երկրագործության» մեջ: Մանրանալով կապիտալիստական Արևմուտքին հատուկ ներհակություններից «աղատ» Ասիայի վրա, Նալբանդյանը գտնում է, որ «համայնական» Ասիան կարող է ապահովել ժողովրդին սոցիալական չարիքներից՝ սովից, չքավորությունից, շահագործումից: Որպեսզի Ասիայում ևս չկրկնվի Անգլիայի, Ամերիկայի, Ֆրան-

սիալի տխուր պատմությունը, նկատում է Նալբանդյանը, անհրաժեշտ է հսղը համայնացնել և միաժամանակ գալիք սոցիալական շարիքների առաջն առնել: Նալբանդյանը չէր կարող աղատագրվել XIX դարի 50—60-ական թվականների հայ դեմոկրատիայի աշխարհայացքին հատուկ հակասություններից, որոնք բացատրվում են ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերություններով: Շատ ավելի ուժեղ և հետևողական է դառնում նա, երբ անցնում է արևմտյան կապիտալիստական պետությունների քաղաքականության և տնտեսական էքսպանսիայի բնութագրմանը և դատապարտմանը: Նրա բանտային նամակների մեջ նշանակալից են, վերջապես, Հնդկաստանում, Ճապոնիայում, Խուրքիայում գործող արևմտյան միսիոներների մասին նեղված սուր գիտողությունները: Այդ միսիոներները, նկատում է Նալբանդյանը, «մեծամեծ ոռճիկներ են բտանում և կանխիկ դրամով կամ անգլիական դեսպանության հովանավորությամբ զնված դավանափոխ անձերի թիվը ավելացնելով»՝ օժանդակ ուժեր են կապիտալիստական պետությունների համար: Դատափետելով դադուիներ զավթող պետությունների արշավանքները, Նալբանդյանը մերկացնում է բոլոր բռնակալությունների հետադիմական էությունը. «... Սոքա ամենքը, իբրև բռնի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում, և ո՛չ ոք չէ հարցնում աշակերտի կամքը՝ կամի՞ արդյոք ուսանել, թե ոչ: Սակայն չէ պիտո աչքից հեռացնել նոցա տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթությունից: Բանտերն են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դատախարահները, շղթան՝ հրահանգիչ զինքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կաղղուրելու մարդարան, կախաղանը և գլխապարտություն խայտառակ սյունը՝ «գուռն ճշմարիտ, որ տանի

ի կեանս յաւիտեանականս: Ժողովուրդների եղբայրության մասին էր երազում Նալբանդյանը, երբ գրում էր այդ տողերը: Ամենակոտորակ կերպով նա մերկացնում էր հնօրյա բոլոր ազգայնականներին, շովինիստներին և ռասիստական գաղափարախոսության մյուս «տեսաբաններին»: Հայ Ժողովրդին նա կոչ էր անում՝ ամենատեսերա կերպով կապվել հին աշխարհի դեմ պայքարող հեղափոխական զանգվածների հետ:

Նալբանդյանը մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրել է Բեկինսկու, Գերցենի, Օգարյովի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու աշխատությունները: Նա կիրառել է Չերնիշևսկու «Հսկաների և պոնդիա» աշխատության հիմնական սկզբունքները հայ արվեստի (Թատրոնի) և գրականության պրոբլեմները: Ընտանեկանությանը նվիրված աշխատությունների մեջ: Նա հաշի է առել նաև Չերնիշևսկու հանճարեղ տնտեսագիտական ծանոթագրությունները, որոնք շատ բարձր են գնահատվել գիտական կոմունիզմի մեծ հիմնադիրների՝ Վ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից: Միլլի «Քաղաքատնտեսության» թե՛ թարգմանությունը և թե՛ այդ թարգմանությանը կցված տնտեսագիտական «ծանոթությունները» տպագրվել են «Սովբեմենիկի» էջերում: Նալբանդյանը տակավին իր վերջին արտասահմանյան ճանապարհորդությունը ձեռնարկելուց առաջ ուսումնասիրել է «Սովբեմենիկի» էջերում ղեկավարված կարևորագույն նյութերն ու գրախոսականները: Կարելի է ենթադրել, որ Չերնիշևսկու հակիրճ և նոր գրախոսությունն էլ թելադրել է Նալբանդյանին ձեռք բերել ու կարդալ բելգիական հետազեմ տնտեսագետ Մոլինարիի «Քաղաքատնտեսությունը»: Նալբանդյանը այդ գրքի վերնագրի ներքո մականգրել է մատիտով, որ դա շատ «զազրելի» աշխատություն է: Շատ կտրուկ կերպով որոշելով իր բացասական դիրքը հե-

տադեմ գիտնականների նկատմամբ՝ Նալբանդյանը կարծեւ գիտաւորյալ կերպով իր հակիրճ գիտողության ներքո նշում է և իր անվանատառերը ռուսերեն՝ «М. Н.»։ Ակնհերե է, որ Նալբանդյանը այդ բնորոշ մակագրությամբ ցանկանում էր ցուցադրել և ընդգծել իր գիրքը Չերնիշևսկու գրախոսականի նկատմամբ։ Մովինարիի «Քաղաքատնտեսության» յուրահատուկ դասընթացը նա դատաւիտում է՝ համակլած անսահման վարույթով։ Բիլգիական հետադեմ տնտեսագետը գրտնում էր, որ ժանտախար, շուման, համաճարակները, մահն ու կոտորածները հեռու աւելցալում «անհրաժեշտ վիրաբույժներին» դեր են կատարել և կրճատելով բնակչության ընդհանուր քանակը, նպաստել են ժողովրդի բարեկեցությանը։ Մովինարին այդ ձևով պաշտպանելով Մալթուսի հետադիմական տեսությունը, առաջարկում էր արհեստական միջոցներով կրճատել ու սահմանափակել առանձնապես աշխատավորների թիվը։ Յինիկորեն նա փառաբանում էր նույնիսկ ժանտախտի, էոտորածի, համաճարակների նման «վիրաբույժներին»։ Հայտնի է, որ այդ կարգի մարդակերական պատգամները պաշտպանում էին հիսլերյան ֆաշիստները։ Միենույն այդ պատգամները ներկայումս նոր պաշտպաններ ունեն իմպերիալիստական ագրեսիան արդարացնող, արեւմտյան պետութայունների ռեակցիոն ձեռնարկումները սրբազործող սև «գիտնականների» ու «գրողների» շրջանում։

Հավատարիմ 60-ական թվականների ռուս առաջավոր գրողների դեմոկրատական և հեղափոխական պատգամներին, Նալբանդյանը անդուլ պայքար է վարել հետադիմության բոլոր մունետիկների դեմ և նոր թափ է հաղորդել հայ իրակա-նության մեջ շահագործող ու բռնակալ ուժերի գաղափարա-

խոսների մերկացման ու դատափետման ուղղությամբ ձեռնարկված մեծ աշխատանքին:

Նալբանդյանի գրական գործունեությունը և հեղափոխական աշխատանքը եղել են հայրենասիրության, ժողովուրդների եղբայրության, դեմոկրատական շարժումների վսեմ պատգամների վրա խարսխված խիղախ և տոկուն պայքար:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

(Ծննդյան հարյուրամյակի առթիվ)

... Եվրոպական կանդիաձ է այսօր մի դժվար լուծանելի խնդրի առջև. այս; տնտեսական խնդիրն է՝ մարդը և հացը, եվ այդ խնդիրը, կանոն թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի: Ոչինչ բռնություն, ոչինչ պահպանողական համակարգություն, ոչինչ ընդդիմադրություն, որևիցե կողմից, չէ պիտի կարողանա փակել նորա առաջը, թեև այսօր հալածվական և արսորական են այդ ապագայի սնարգարները և առաքյալները...»:

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

I

1862 թ. Միքայել Նալբանդյանը ցարական կառավարության կարգադրությամբ ձերբակալվել է և ասպա բանտարկության ենթարկվել Պետրոպոլիովյան հայտնի բերդի «Ալեքսեյան Թավելին» անունը կրող բանտում:

«Ալեքսեյան Թավելինի» նկուղները հին Պետերբուրգի այն մեկնարաններն էին, ուր սովորաբար հեղափոխական մտքի գործիչները «մտնում» էին կամ մահանալու, կամ էլ խեղազարվելու համար:

«... Այդ ամենազաղտնի բանտը նետվելու և այգտեղից աղատվելու համար, — կարդում ենք Թավելինի պատմության

ներ նվիրված նորագույն մի ուսումնասիրության մեջ*, — անհրաժեշտ էր ցարի հրամանը: Բանտ կարող էր մտնել միմիայն բերդի պարետը, ժանդարմների պետը և «Նրորոգ բաժանմունքի» կառավարիչը: Նրբ բանտարկյալը մեռնում էր, նրա դիակը կեսգիշերին դուրս էին առնում բանտից դեպի բերդի մյուս կաջարանները, որպեսզի ոչ ոք չիմանա, որ այդ բանտում կան բանտարկյալներ...»:

Ալեքսեևյան Ռավելինից դուրս էին թողնվում միմիայն նրանք, որոնք արդեն վաղօրոք մահվան էին դատապարտված:

Նալբանդյանի հետ բանտարկված էր մարկիզ դե-Տրա-վերսեն, որը Ռավելինում խելագարվում է: Նրա կինը կարողանում է ստանալ ռազմաբուժական ակադեմիայում իր ամուսնու դիակը:

Նալբանդյանը դատապարտված էր աքսորի: Սակայն հասնելով իր աքսորավայրը՝ նա հենց այստեղ էլ, Կամիշին քաղաքում, մի քանի ամսից մահանում է:

Նրա հղբայրն ու մոտերիմ բարեկամները նույնպես կարողանում են ստանալ միմիայն Մ. Նալբանդյանի դիակը:

Այդպես էր ցարական բռնակալությունը խեղդում և տրորում այն մի քանի «խենթերին»՝ միայնակ հեղափոխականներին, որոնք լուսավոր աստղի նման երևում էին մռայլ հորիզոնի վրա և մի ակնթարթ իրենց հրաշունչ խոսքով վառում շրջապատը...

Նալբանդյանի այդ վիճակն ինքնին արդեն թելադրում է

* Щеголев, Алексеевский Равелин, М., 1929, Հառաչարան. Նալբանդյանի միմիայն անունն է հիշում Շչեգոլեբ իր այդ ուսումնասիրության մեջ, էջ 29:

առանձին ուշադրություն նվիրել «խոսքի ու գործի» քննությունը:

Միակն է նա հայ մտավորականության շարքերում հենց իր աչգ առանձնահատուկ գիրքով: Միակն է, որ աննկուն խիղախությունը, իր «հարադատ միջավայրի ոգուն» հակառակ լիզվով ձայնակցել է 60-ական թվականների առաջավոր մտավորականության գաղափարներին և յուրահատուկ ձևով կիրառել իր ուսուցիչների խոսքերը հայ իրականության ուրույն երևույթների նկատմամբ: Ներկայումս Մ. Նալբանդյանի հասարակական գեմբի աչգ կողմը կարելի է համարել բավականաչափ պարզաբանված:

Այդպես չէր տակավին մոտ անցյալում: Հայ իրականության մեջ իշխող երկու «հիմնական» բանականները տարբեր մոտեցում ունեին Նալբանդյանի նկատմամբ: Եթե կղերական-ետադիմական բանակը համարում էր Նալբանդյանին «խիստ կրփոս», «կաբկտահաբ» և «օձի քույնը» բեբանին հրապարակախոս*, ապա լիբերալ «լուսավորիչները» ողջունում և պաշտպանում էին «նոր գաղափարների» մունետիկ Նալբանդյանին:

Սակայն պաշտպանելով անպամ, բուրժուական նոր մտավորականությունը չէր կարողանում և չէր ցանկանում հասկանալ նոր Նալբանդյանին՝ կապիտալիստական Անգլիայի և ցարական Ռուսիայի դեմ կովի և լնող հեղափոխական-հրապարակախոսին:

Դա պատահական կամ էլ սովորական «անսիրտություն»

չէր:

* Այդպես է որակում Նալբանդյանին ժամանակի գործիչներից մեկը՝ հայտնի: գրավահառ էնֆիսանցիս գրեթ մի նամակում:

Սոցիալական «նոր ուժը» առևտրական կապիտալի բանակը և բուրժուական մտավորականությունը, տեսնում էին միմիայն նացիոնալիզմի տեսաբան և Ստ. Նազարյանցի ղինակից նալբանդյանին: Շատ ուշադրավ է այն, որ այժմյան բուրժուական հրապարակագիրների մոտ ևս նկատում ենք միանման մոտեցում: Կապիտալի նորագույն մունետիկները՝ հայ դաշնակցականները, սովորաբար կողք-կողքի են շարում Ստ. Նազարյանցին, Միք. Նալբանդյանին և Գր. Արծրունուն: «Նազարյան և Նալբանդյան», — կարդում ենք այդօրինակ պապետներից մեկի մոտ, — հայություն մեծագույն բարիքը կհամարեին անոր մտավոր և բարոյական վերածնունդը Եւրոպայի լուսավորության միջոցով: Մասնավորաբար Նազարյան պատմական մեծ դերի մը կոչված կհամարեի իր ժողովուրդը»: Ապա բերելով Նազարյանցի խոսքերն այն մասին, որ հայերն, իբրև «ֆրիստոնյաներ», պետք է տարածեն «ելլոպական լուսավորության արդասիքներ ասիական ժողովուրդներու մեջ» և դառնան «Ասիայի համար մեկ լուսավոր ճրագ, փարոսյան աշտարակ մը ասիական թանձր խավարի մեջ»: Վերոհիշյալ հրապարակախոսը գտնում է, որ Նալբանդյանը տարբերվել է միմիայն իր խառնվածքով ավելի «լրջախոհ» Նազարյանցից*: Այստեղ ասված է ամեն ինչ:

Ահա այդպես է եղել անցյալում քննադատների մոտեցումը: Այլ կերպ չի ցանկացել մոտենալ և մեկնաբանել Նալբանդյանին հայ ավանդական պատմագրությունը:

Հասարակական-մտավորական շրջաններին հայտնի էր, իհարկե, այն, որ փարիզում հրատարակված «Երկրագործու-

* Վ. Լուսյան, Ստ. Նազարյան և Միք. Նալբանդյան («Հայրենիք», 1929, № 5124, մարտի 10):

թյան» հեղինակը Նալբանդյանն է։ Այդ գրքույկը բավականաչափ տարածված էր ոչ միայն արտասահմանում, այլ նաև Ռուսաստանում։ Գերցենյան անլեզալ հրատարակությունների հետ միասին «Երկրագործությունն» էլ այս կամ այն ձևով կարողանում էր ներս մտնել երկիր։ «Սենատական գործից» հայտնի է համենայն դեպս այն, որ «սոփաբանական գիրք» անվան տակ Նալբանդյանի աշխատությունն էլ («Գործի» մեջ խոսվում է տասն օրինակի մասին) անլեզալ ճանապարհով ուղարկվել է արտասահմանից Ռուսիա։

Վերջապես՝ հայտնի է նաև այն, որ բացի արտասահմանյան հրատարակությունից, կային և ձեռագիր հրատարակություններ, որոնք առանձնապես տարածված էին կովկասյան քաղաքներում։

Չնայած այդ ամենին, թե՛ այդ անհայտ երկրպագուները և թե՛ բանասերները հաճախ «Երկրագործությունն» էլ մոտենում էին ուրույն ազգայնական տեսակետից։ Այդտեղ ևս, միջազգայնական տրամադրությամբ ղունավորված այդ երկասիրության մեջ, ազգայնականները նկատում էին միմիայն այն, ինչ որ իրենց համար «հոսկանալի» էր, — պայքար հանուն «ազգի» ազատագրման, հանուն «պետական անոթի» կազմակերպման։

Այդպես էր արդեն իշխող սոցիալական խավերի ընդհանուր մտայնությունը։ Դրա համար էլ նորածին հայ բուրժուազիային սպասավորող մտավորականությունը՝ նշմարում էր միմիայն «Մեր հայրենիք» երգող Նալբանդյանին։ Յոթնամյանական թվականների զաղտնի մի գործից՝ հայտնի է մեզ,

* Дело канцелярии тифлисского губернатора по части секретной. О фотографических карточках армянского писателя Палбандяна. По описи № 10. Началось 4 июня 1874 года.

որ թե՛ Երևանում և թե՛ Թիֆլիսում զաղտնի կերպով հայ ուսանողների շրջանում տարածվում էին Միքայել Նալբանդյանի լուսանկարները, որոնց վրա մակագրված էր՝ «Հայրենիքի փրկիչ»։ Միամիտ աչդ երիտասարդությունը համոզված էր, որ Նալբանդյանը մինչև վերջ կանգնած է հղել «Հյուսիսափայլի» քարոզած զաղափարական դիրքերի վրա, և հենց որպես «հայ հայրենասեր» էլ տուժել է իր անձնվեր գործունեության համար։

* * *

Այս օրերս լույս է տեսել ուսական հասարակական մտքի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող մի դիրք. դա Օդարյովա-Տուչկովայի «Հուշերի» ժողովածուն է։

Օդարյովան Գերցենի ամենամտերիմ ընկեր, բանաստեղծ Օդարյովի կինն էր։ Մեզ համար նրա հիշողությունները հետաքրքրական են այն կողմից, որ հաղորդում են մի քանի տեղեկություններ նաև Նալբանդյանի մասին։

Օդարյովան պատմում է, որ Նալբանդյանը մի քանի անգամ հղել է Գերցենի մոտ, թողել է «խիստ բարի մարդու» տպավորություն և լավ ընդունելություն գտել խոհոնի էմիգրանտների շրջանում։ «Բակունինը, — ասում է Օդարյովան, — իսկույն իր ձեռքն է առնում Նալբանդյանին և ապա ամբողջովին ենթադրում հայ հեղինակին իր ազդեցությանը»։ Նա նույնիսկ առաջարկում է Նալբանդյանին նկարվել լուսանկարչի մոտ խոհոնում։ Օդարյովայի հաղորդած տեղեկություններն, ընդհանուր առմամբ, բավական ճիշտ են։ Այն լուսանկարը, որի մասին խոսում է Օդարյովան, հիրավի գոյություն ունի։ Այդտեղ Նալբանդյանը նկարված է նստած դիր-

րով, լրագիրը ձեռքին*։ Ճիշտ է նաև այն, որ Նալբանդյանն առանձին ակնածանքով էր վերաբերում Գերցենին, Քակունի-նին և Օդարյովին։ Ինչ վերաբերում է Օդարյովայի հաղորդագրությանն այն մասին, թե Նալբանդյանը «ունեոր մարդու» տպավորություն էր թողնում, դա բացատրվում է, իհարկե, նրանով, որ Օդարյովային հայտնի չէր Նալբանդյանի «հնդկա-կան առաքելությունը»։ Որպես նոր Նախիջևանի համայնքի լիազոր Նալբանդյանը ստացել էր հնդկահայ մի վաճառ-կանի կտակած գումարները և, բնականաբար, հնարավորու-թյուն ուներ կատարել այն ճանապարհորդությունը, որն ինք-նին արդեն համարվում էր ունեոր մարդու անհրաժեշտ հատ-կանիշներից մեկը։

Սիենույն անտեղյակությամբ է բացատրվում նաև Նալ-բանդյանի հասարակական դեմքի մակերեսային այն բնորո-շումը, որ դառնում ենք Օդարյովայի մոտ։ Վերջինն, անշուշտ, ծանոթ չէր Նալբանդյանի հայացքներին։ Բնականաբար, Օդարյովային թվում էր, որ «բարի հայ մարդը» չափազանց անհեռատես Բակունինի հերթական «զոհերից» մեկն է**։ Այն, որ Նալբանդյանի, ինչպես նաև Սերնո-Սոլովյովիչի, Վևտոշ-նիկովի և մյուսների ձեռքակալության մեջ քիչ դեր չի կատա-րել Բակունինի անզգուշ վերաբերմունքը, այդ գուցե և ճիշտ է։ Բայց դա չի նշանակում ամենեին, թե Նալբանդյանը միան-գամայն «անմեղ» էր դատական կառավարության քրեական Երինագրքի տեսակետից։

Մեղ հայտնի են Բակունինի և Գերցենիի ավելի քան որոշ

* Այդ լուսանկարի մի օրինակը, որքան հիշում եմ, կա և Երևանի զրական-պատմական թանգարանում, Նալբանդյանի պահպանում։

** Тучкова-Огарева, Воспоминания, Л., 1929, стр. 324—326.

գիտողությունները Նալբանդյանի մասին: Սերնո-Սոլովյովի-
չին 1862 թ. հունիսի 24-ին գրած մի նամակի մեջ, օրինակ,
Գերցենին ասում է. «...[Նալբանդյանը] չափազանց ազնիվ
մարդ է, ասացիք նրան, որ մենք հիշում և սիրում ենք
նրան...»*: 1862 թվականի մայիսի 6-ին Լոնդոնից գրած նա-
մակի մեջ Բակունինը գրում էր ի միջի աչուց դեպի Թիֆլիս
ուղեորվող Վարոնյանի մասին, որին հանձնարարելով՝ հա-
ջորդում էր Նալբանդյանին հետևյալը. «...Նախ՝ սովորեցրեք
նրան, թե ինչպես Մոսկվայի և Պետերբուրգի միջոցով գրա-
դույթուն ունենա ինձ հետ, նույնպես Օդեսայի և Թիֆլիսի,
այն է՝ Պոլսի միջոցով, որի համար նրան տրված կլինի հաս-
ցե: Նա օգտակար կլինի թե՛ Եվրոպայի և թե՛ Ասիայի նկատ-
մամբ, այդ պատճառով վատ չէր լինի, որ սրա մասին հանձ-
նարարեիր թիֆլիսցի լավ մտրդկանց, որոնք իրենց հերթին
ծանոթներ ունենային Պոլսում...»:

Օգարյովան չէր կարող ոչինչ խմանալ այդ բոլորի մա-
սին: Նա այդ ամենը չդիտեր: Հին ժամանակ հեղափոխական-
ները բավական զգույշ և հեռառես էին, այնքան էլ մեծ
շռաչլությամբ նրանք չէին շաղակրատում իրենց ազգական-
ներին: մոտ կոնսպիրատիվ խնդիրների և հարցերի մասին:

«Մենատական գործի» մեջ ամփոփված վավերագրերը
հաստատում են, որ Միք. Նալբանդյանը ցարական միապե-
տության և միջազգային ուսակցիայի դեմ պայքարող հեղա-
փոխականների հետ կապված է եղել ամենատերտ կերպով:

* Չեն՝ ծանրանում ավելի մանրամասն այդ նամակների վրա՝ քննա-
նոր այս ակնարկը շնորհապատասխան համար: Գերցենի նամակների մեջ Նալ-
բանդյանի անունը շատ է հիշվում (Герцен, Полн. собр. соч. и писем,
СПб., 1920, т. XV, с. 219, так же с. с. 105, 110, 195, т. XVII, СПб.,
1922, с. 26 և այլն):

Ավելի ևս համոզվում ենք դրանում, իրք նորից, առանց կանխակալ միտումների, առաքկաշական բնության ենք ենթարկում նրա հասարակական-տնտեսական հայացքները:

Մեր ձեռքին կղած նյութը քիչ չէ: Նալբանդյանի հոգվածները, նրա «Ներկրագործությունը» և ապա նամակներն թնառարկելի նյութ, ևն մատակարարում հեղափոխական-հրապարակախոսի մարտական հայեցողության լուսաբանության համար:

II

Ստեփաննոս Նալբարյանցը երբեք չի շեղվել իր հիմնական ուղուց: Արտահայտելով հայ նորածին ու ամփոփվող բուրժուազիայի հայացքները և կոչ անելով զարկ տալ «Ֆաբրիկագործության» ու յուրացնել կապիտալիստական Արևմուտքի ողջ մշակույթը, Ստ. Նալբարյանցը միաժամանակ հիմնադրում և պաշտպանում էր նաև սովանդական հին Հայաստանի «արժեքները»:

Այդպես էր արդեն կառուցված «աղատամիտ» հայ բուրժուազիայի հոգեբանությունը, այդպես հակասական էր նրա մտածելակերպը: Դա պայմանավորվում էր հայ վաճառականության առանձնահատուկ կացությունամբ, նրա ուրույն դիրքով և արտոնյալ դրությունամբ ռուսական քաղաքներում և Անդրկովկասում:

Այդպես էր իր ամբողջ էությունամբ հայկական լիբերալիզմը թե՛ Նալբարյանցի ժամանակ և թե՛ հետագայում, Գր. Արծրունու և Քր. Միքայելյանի օրերին:

Նալբանդյանը, ինչպես հայտնի է, մինչև 1861 թ. կղել է այդ միևնույն լիբերալիզմի ամենատաղանդավոր հրապարակագիրներից մեկը: Այդպես լինելով էլ նա հաճախ տար-

բնրվել է Նաղարայանցից և մի շարք կարևորագույն խնդիրներ
ի նկատմամբ առաջադրել իր ուրույն տեսակետը:

Հակառակ իր «լրջախոհ» ղինակցին, Նալբանդյանը ալի-
լի սերտ և անմիջական կապված էր ժողովրդական վարքի խա-
վերի՝ արհեստավորության և գյուղացիության, մանրբուր-
ժուական գեղեցիկատիպի հետ:

«... Մեր ազգի մեջ,— կարդում ենք Նալբանդյանի
մոտ,— այժմ կան հայացքներ, կան ուղղությունը, կան, ու-
րեմն և, դրոշակներ, կա պատերազմ: Օտարոտի մի բան էլ
հերքել այս. նույնպես օտարոտի էր ցանկալ մի տեսակ միա-
վորություն հակառակող բաժինների: Այս վնասակար էր մեր
ազգին: Պատեհազմը հետևանք է շարժողության, իսկ շարժո-
ղությունը կյանք է... Բող յուրաքանչյուր կողմը առանց
բռնադատական զոհաբերության և առանց ամենայն բռնա-
դատական կամակերպության գործ դնել իր բոլոր զորությունը,
իր մտքերի բոլոր խորությունը, այդ ժամանակ միայն կա-
րող է հայտնվիլ կատարյալ և վճռական հաղթությունը... Սուս
խաղաղասիրությունը, որի տակ, որպես զայլ ոչխարի զգես-
տով, քաֆնվում է անձնական օգուտ ու վառք, մենք մեծա-
բույն ենք հզվիտ պատվանդանով: Ճշմարտության բուն հետե-
վանքը բաժինը է... Եվ դինին մինչև չխմորվի և չպղտորվի,
չի պարզվում...» («Նկատողությունք»)*:

Այդպես ձևակերպելով իր հայեցակետը՝ Նալբանդյանը
ամենակտրուկ կերպով առաջ էր տանում անցյալի խարխուլ
արժեքների մարտական ընդհատությունը: Նրա գործունեու-
թյունը նախնական այդ շրջանում չէր տարբերվում հիմնա-
կանում «ավատական» բուրժուազիայի նոր մտավորականու-

* Հնդգծումները Ա. Կարինյանին են—խմբ.:

կյան ընդհանուր գաղափարախոսությունից: Բայց և այնպես, նրա խոսքը ավելի հատու էր, նրա գրիչն՝ ավելի սուր: «Մեծատունների», «աղաների», «բռնակալների» նկատմամբ նա գործ էրածում ավելի անհաշտ լեզու, քան այդ նկատում ենք վերածնության շարժման մնացյալ ներկայացուցիչների մոտ:

Ինչն էր զրդում Նալբանդյանին լինել այդքան «կրքոտ» և «տաքլուխ»:

Այդ հարցին ճիշտ պատասխան տալու համար հարկավոր է միայն հիշել նրա երիտասարդական տարիները, ծանր կյանքը Նոր Նախիջևանի իրականության մեջ, հայտնի պայքարը «աղա խալիբովի» և քաղաքային համայնքի մնացյալ «աղաների» դեմ, այդ միևնույն համայնքի մոտիկ անցյալը, սոցիալական յուրահատուկ այն բախումները, որոնք եղել են Նոր Նախիջևանում XVIIII դարի վերջից մինչև XIX դարի առաջին կիսամյակը՝ «նիհարների» և «շաղերի», «հառարակ ժողովրդի» և «մեծ աղաների», քաղաքային մեծատունների և մանրբուրժուական դեմոկրատիայի միջև: Այդ բախումները գրեթե միշտ կրել են պարզունակ բնույթ և ծածկված են եղել «ժամանակի ոգուն» մոտ կրոնական կեղևով: Արևմտյան Նվրոպայումն էլ, նոր դարաշրջանի նախամուտին, գյուղացիական և արհեստավորական շարժումները հաճախ հանդես են եկել կրոնական հերձվածների ղգեստներով:

Կարևորն այն է, որ բոլոր այդ «կռիվներն» ու «վեճերը» իրականում կրել են հասարակական այլազան խմբակցությունների սոցիալական բախումների բնույթ:

Նոր Նախիջևանումն են աղա վաճառականները Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ միասին ցրել «ղայֆախանաներում» և «հրապարակներում» հավաքվող այն «անբավականներին» և «ապականիչներին», որոնք Արղությանի

«Դաշնագրութեան» երկրորդ խմբագրութեանը կցված ներածութեան մեջ բնորոշվում են որպէս «պարզամիտ» մարդկանց խաբող «սղտորիշներ»*: Այդ քաղաքումն են աղաները մտաւկաճար արեւ հրապարակով «Հասարակ ժողովրդի» պարզունակ զաղափարախոս Դերեջանյանին, և ապա՝ «գութեանատորի» միջոցով աքսորել շղթայակապ ըմբոստին հեռավոր Սիբիրի Ներշինակ քաղաքը:

Պատահաբար մեզ հայտնի են Դերեջանյանի և Աբրամովի անունները. մնացյալներին մենք չգիտենք: Սակայն եղել են զրանք, քանի որ նոր նախիջեանում մանրբուրժուազիան, որքան էլ առաջին նվազ տարօրինակ երևա այդ, եղել է բաւական ուժեղ և ակտիւ: Խալիբով աղաչի դեմ ուղղված հասարակական պայքարը, անշուշտ, շարունակութեամբն էր անցյալի սոցիալական ընդհարումներին:

Այդ միջավայրումն էլ Նալբանդյանը յուրացրել է ասուլութեան այն խոր զգացումը գեպի «աղաների բանակը», որի նկատելի արձագանքները նշմարում ենք հաճախ և նրա մարտական հրապարակախոսութեան մեջ, առանձին այն հոդվածների և «նկատողութեանների» մեջ, որոնք «լրջախոհ»

* Հետաքրքրական է առանձնապէս Արզութեանի հրատարակած «Դաշնագրութեան» 6-րդ կետը. Շեշտելով նախորդ կետում այն, որ հասարակական բոլոր խնդիրները պիտի ըննվեն 36 հոգուց բաղկացած հոգաբարձական ժողովի մեջ, 6-րդ կետը ընդգծում է. «Արտաքո այսմ որ ինչ ժողով լինիցի ի խանութս և ի դաշնախանայս և ի հրապարակս, ուր արգելեալ են օրինօք, հրամայել ի Մազիսարատէն Պոլիցիէն բռնել զխոտովիշան և հրապարակաւ պատժել, և եթէ աստիճանաւոր որ իցէ ի մէջ նոցա, արտարսել ի հասարակութենէ, որպէս հատեալ անդամ, և գրել ի գութեանական կառավարութեան՝ պատժել զշարճճին, այն, որպէս զպղտորիշ տեքունի ժողովրդեանս աշամիկք»:

Նաղարչանցին թվում էին «շափաղանցրած միակողմանիություն» և «անիմաստ լշնամանք»: «Հյուսիսափայլի» Նալբանդյանը «ազատական» ընդհանուր հոսանքի զաղափարների հիմնավորման հետ միաժամանակ սրտնում էր միշտ քննադատություն ավելի կտրուկ ուղիներ, կյանքի և հասարակական երևույթների ճանաչողության ճիշտ մեթոդներ, հասարակական պայքարի ավելի սուր զենքեր:

Եվ ահա՛ այդ «նոր ուղիները» գտնում է նա, երբ ծանոթանում է ուսա առաջավոր գրականությանը, երբ յուրացնում է ժամանակի մոհիկանների՝ Բեկինսկու և Գերցենի, Պիսարևի և Չերնիշևսկու գրվածքները, երբ անցնելով արտասահման՝ հնարավորություն է ստանում մոտենալ 60-ական թվականների հասարակական հեղափոխական շարժումների անմիջական ակունքներին:

Արտասահմանյան այդ ճանապարհորդությունը վճռական նշանակություն է ունենում Մ. Նալբանդյանի համար, որովհետև հենց այդ շրջանումն էլ նա ծանոթանում է Գերցենի, Բակունինի, Օգարյովի և ուրիշ անվանի գործիչների հետ և ապա՝ «նոր միջավայրում» ստեղծում հասարակական-տնտեսական ուրույն այն սիստեմը, որի ամփոփ նկարագրությունը տրվում է «Երկրագործության» մեջ:

III

Առաջին անգամ Լոնդոն է անցնում Մ. Նալբանդյանը 1861 թ. հունվարի 18-ին: Սենատական «Գործի» մեջ կա ի միջի այլոց նաև Նալբանդյանի ձևագիր մի տետրը, ուր նշանակված է նրա հնդկական ճանապարհորդության ամենամանրամասն մարշրուտը: Միևնույն 1861-ին Նալբանդյանը

նորից լոնդոն է անցել փետրվարի 9-ին: Առաջին անգամ նա լոնդոնում մնացել է միայն մեկ օր, իսկ փետրվարին՝ տասը օր: Ավելի երկար է լինում նրա այցելությունը 1862-ին, Հնդկաստանից վերադառնալուց հետո:

1862 թ. հունվարի 9-ին անցնելով լոնդոն՝ նա մնում է այդտեղ մեկ ամիս:

«Մարշրուտի» վերջին մասում հիշատակվում է մի ուրիշ այցելության մասին ևս, բայց առանց թվականի: Ներկա պարագայում մեզ օգնության է դալիս Գերցենի Նրկերի խրմբադիր Լեմկեն, որը Գերցենի նամակների քննության վրա հենվելով՝ շեշտում է, որ Մ. Նալբանդյանը 1862 թ. ապրիլի 11-ին մեկ է լոնդոն և ապա՝ ապրիլի 13—14-ին վերադարձել Փարիզ*:

Եթե նկատի առնենք այն, որ արդեն 1862-ի սկզբին հնդկական ժառանգության հետ կապված հիմնական խնդիրներն ավարտված էին, հավանականությունից զուրկ չի թվում այն, որ լոնդոնյան վերջին այցելությունները կրել են գլխավորապես քաղաքական բնույթ, և որ հենց այդ ժամանակ էլ աշակվել են այն հարաբերությունները, որոնց մասին հիշատակվում է Բակունինի նամակների մեջ:

Բակունինի և արեւմտահայ հրապարակագիր Սվաճյանցի նամակների համեմատական քննությունը բերում է այն եզրակացության, որ Բակունինին և Նալբանդյանին կապել է ամենից առաջ քաղաքական ընդհանուր մեկնակետը հեղափոխական դալիք շարժումների նկատմամբ:

Բակունինը 1862-ին դատվում էր համասլավոնական շարժման կազմակերպման պաշտօնարով: Նա համոզված էր,

* Герцен, Полн. собр. соч. и инсеп, т. XXII, стр. 320.

որ սլավոն ժողովուրդները, որպես «թարմ» և «գլուղա-
ցիական» ժողովուրդներ, կարող են ավելի հեշտ միանալ
և ապա՝ տապալելով աշխարհի ամենաուժեղ բռնակալների
իշխանությունը, հաստատել «ազատ ժողովուրդների հանրա-
պետություն»:

...«Գերմանական և ֆրանսիական դեմոկրատների մե-
ծագույն սխալն, իմ կարծիքով,— ասում է Բակունինը իր
հայտնի «Խոստովանություն» մեջ,— այն էր, որ նրանց պրո-
պագանդը սահմանափակվելով քաղաքների շրջանակներով՝
չի տարածվել գյուղերում: Քաղաքները դառել են, այսպես
ասած, արիստոկրատներ, և այդ պատճառով գյուղերը ոչ
միայն անտարբեր դիտողներ են եղել հեղափոխության նկատ-
մամբ, այլև շատ վաշտերում թշնամական վերաբերմունք են
ցուցադրել դեպի հեղափոխությունը...»*, ՆՅԼ Բակունինի
այդ խոսքերին ավելացնենք նրա նամակներից մեկի մեջ
շեշտված դիտողությունը այն մասին, որ գալիք շարժում-
ները կարող են սկսվել Արևելքից, որ սլավոն ժողովուրդների
հետ միասին կարող են ոտքի ելնել «հայկական» և «հունա-
կան» ժողովուրդները, այդ պարագային Բակունինի ռազմա-
հեղափոխական տակտիկան կդառնա միանշանակ հասկա-
նալի: Կանգնած լինելով իր հիմնական մեկնակետի վրա՝
Նալբանդյանին էլ նա մոտենում էր, որպես իր հետեուղի և վի-
ճակակցի: Նրա համար կարևորը այն էր, որ կովկասյի մի
գործիչ կարող է կազմակերպել շարժում Կովկասում և Թուր-
քիայում, օժանդակ ուժ հանդիսանալ «գերմանո-թաթար»
ցարիզմի և թուրք սուլթանաթի դեմ ուղղված ընդհանուր
շարժման կազմակերպման գործում: Սակայն այդպես էր

* Տե՛ս «Материалы для биографии Бакунина», М., 1923, т. I,
стр. 196.

խորհում Բակունինը, և ո՛չ թե Նալբանդյանը: Եթե Բակունինի ափսոսանքը գործելակերպը, հեղափոխական պարտիզանի «գործնականությունը» և խիղախությունը հասկանալի էին Նալբանդյանին, ապա չի կարելի միևնույնը ասել Բակունինի սոցիալ-քաղաքական դադափարախոսություն մասին: Նալբանդյանը ինքն ևս ուներ իր սեփական մոտեցումը մի շարք խնդիրների նկատմամբ: Բակունինը նրա համար ժամանակավոր բնկերակից էր: Բակունինից նա աշխատել է ստանալ միայն այն, ինչ որ անհրաժեշտ էր «տնտեսական խնդրի» շուտափույթ լուծման համար, հեղափոխական-մասսայական շարժումների տեխնիկական կազմակերպման համար: Ինչ վերաբերում է Բակունինի հասարակական-տնտեսական գաղափարախոսությանը, նրա սլավյանական ուրույն նացիոնալիզմին, այդ ամենը օտար և անհասկանալի էր Նալբանդյանին:

Դրա համար էլ չի կարելի համաձայնվել նրանց հետ, որոնք Նալբանդյանի «երկրագործության» մեջ արժարժված էոնցեպցիան կապում են Բակունինի հայեցողության հետ:

Բակունինը, Գերցենը, ճիշտ այնպես, ինչպես և ժամանակի մյուս մարտական հրապարակագիրներն ու մտածողները, մեծագույն ազդեցություն են թողել, իհարկե, Նալբանդյանի վրա: Բայց ազդվելով անգամ այդ մտածողներից՝ «Երկրագործության» հեղինակը ստեղծագործել է ինքնուրույն և կառուցել իր առանձին տեսությունը՝ համակերպվելով միջավայրի կոնկրետ պայմաններին:

IV

Հայ լիբերալ պատմագիրները կանդնած էին այն տեսակետի վրա, որ թուրքահայերի ազատագրմանը և «հայ ժո-

դովրդի բաղաբական վերածնությունը» կարող է օժանդակել միմիայն «քաղաքակիրթ» քրիստոնեական և կապիտալիստական Արևմուտքը։ Իգևալականացման ենթարկելով հվրոպական կուլտուրան, «ազատամիտ» բուրժուազիայի հրապարակագիրները համոզված էին, որ հայերի հվրոպասիրությունը պիտի զնահատվի արժանի կերպով արևմտյան պետությունների կողմից։ Եվ ահա, սպասելիք այդ օգնությունն ավելի շուտ ստանալու համար, ուսանայ լիբերալները հիմնավորել ու երգել են արևմտյան կապիտալիզմի հառաջընթացը և կապիտալիստական պետությունների գաղութային բաղաձևականությունը։

Նալբանդյանի «Երկրագործության» մեջ մենք նկատում ենք միանգամայն հակառակ մոտեցում։

Նալբանդյանն արժարժում և պարզաբանում է գերցեղյան խոհերը արևմտյան «քաղաքակիրթության» մասին, սակայն մի էական տարբերությունը։

«Երեքացած» Եվրոպային նա հակադրում է ավելի թարմ Ասիան՝ երկրագործական և «գյուղացիական» Ասիան։

«Եվ ինչպես Միջին դարերում,— ասում է նա,— Ասիո անկյուններից խուռն բարբարոսների իջան ու հեղեղեցին Եվրոպան, այնպես ևս մաքուր և հացի խնդիրը լուծվելուց հետո, հվրոպական մարդը պիտի իջնի Ասիա։ Պիտի դա օր, երբ այն պառավ Ասիան պիտի մանկահա, և ասիական ազգերն այն վալրկյանից պիտի սկսանին յուրյանց պատմությունը... Ասիո ապագան ավելի մեծ է, ավելի լայն է տնտեսական խնդրի վերաբերությամբ, քան թե Եվրոպիո ապագան»։

Բավական է միայն համեմատել այդ տողերը մեր ակնարկի առաջին հատվածում բերված՝ Նազարյանցի խոսքերի

հետ, որպեսզի պարզ լինի երկու հիմնական տեսակետների հակադասական տարբերությունը:

Նալբանդյանը ելնում է կապիտալիստական Արևմուտքի անկման անհրաժեշտությունից: Նա ոչ թե եվրոպական պետություններից է սպասում որևէ օգնություն արևելյան ժողովուրդների համար, այլ ամենավճռական կերպով կոչ է անում մասսաներին՝ ոտքի ելնել հեղափոխական ընդհանուր մարտի համար:

Այդ մասսաներին սթափեցնելու նպատակով նա ժխտում է այն սուտ փաստը, թե եվրոպական պետությունները տիրում են զանազան աշխարհների՝ «վայրենությունը քաղաքակրթելու համար», և ապա մերկացնում առանձնապես անգլիական քաղաքականության իսկական բնույթը Հնդկաստանում և Չինաստանում: «Անգլիան, — կարդում ենք «Երկբազործություն» մեջ, — ամիսը երեք շոգենալ ամիսն բռնությունամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկությանը և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենալ արծաթ է ստանում. այս անբարոյականություն է»:

Մի կողմ թողնենք Նալբանդյանի քննադատության մեթոդը և ձևը: Հաճախ նա դիմում է բարոյական բնույթ կրող առարկությունների օգնությանը, շատ անգամ դեգերում է հակասությունների մեջ: Ձգտելով կանգնել մատերիալիստական մեկնակետի վրա, նա մերթնդմերթ փառաբանում է իդեալիստ իմաստասերների շտեմարանից առնված դիտողություններով:

Բայց և այնպես, չնայած այդ ամենին, կապիտալիստական Արևմուտքի և «քաղաքակրթության» նկատմամբ նա ունի միշտ որոշ և բացասական տեսակետ:

«... Մեր աչքի առաջ են, — հիշեցնում է նա Նաղարյան-

ցի հետևողներին,— բյուրավոր անգործ գործավորք, որ տանջվում են սովից և վերջին ճիզն են թափում, պատերազմելով մի ծայրացյալ աղքատության դեմ»... Այդ և հետագայ տողերը Նալբանդյանն ընդգծում է կարծես տռանձին շեշտով: Նրան լավ է հայտնի և այն, որ եվրոպական պետությունները դասակարգային պետություններ են: Խոսելով «ազգության» մասին, նա շեշտում է, որ «ընդունում է ազգությունը, որպես «իրողություն», թեև «բանականությունը երբեք չի կարող արդարացնել նրան»: Ըստ Նալբանդյանի՝ իսկական «ազգությունը» «հասարակ ժողովուրդն» է, և «ոչ թե նրա միջից, նրա քրտինքով և նրա արյունով հառաջացած մի քանի մեծատուներ»:

«... Խեղճ ազգը,— կարդում ենք «Երկրագործության» մեջ,— կրում է ծանր հարկեր, զոհում է յուր առույց զավակները բշխամի՞ն վաճելու համար. ոգևորվում է հաղթությամբ, տաղեր է երգում և գործը ավարտվելուց հետո ուրախ-ուրախ վերադառնում է յուր տեղը, կարծելով և հավատալով, թե մեծ գործ կատարեց, հայրենիքը փրկեց, հողը փրկեց և պատվը պահեց: Սուրանից ավելի կոպիտ և խոշոր հեզնություն մե՞նք չենք կարող երևակայել...»:

«Երկրագործության» տառչին մասն ամբողջովին կազմված է քննական այդ ձևով և ուղղված է հենց նրանց դեմ, որոնք «թուրքահայերի ազատագրումը», և «հայերի ընդհանուր վերածնությունը» կապում են անգլիական և եվրոպական որևէ այլ պետության աջակցության հետ:

Նրա հիմնական ուղադրության գլխավոր նյութը «տնտեսական խնդիրն է», մարդու և հացի խնդիրը, որը տակավին չի լուծվել Եվրոպայում: Բայց նա գոյություն ունի: Նա ըստ

Նալբանդյանի, ամենաէական խնդիրն է, և «կանուխ թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով՝ պիտի լուծվի»...

Այդ «փոթորիկներին» հետևող գալիք «լուսեղեն ապագան» Նալբանդյանը դժուժ է, պետք է ասել, խիստ ընդհանուր և անկատար կերպով: Մի այլ տեղ մենք շեշտել ենք արդեն, որ Նալբանդյանին չի կարելի սոցիալիստ համարել, քանի որ ապագա նրա հասարակության մեջ մնում են տակավին մասնավոր սեփականության որոշ տարրեր*, նա ինքն էլ կանգնում է մանր բուրժուազիայի տեսակետի վրա: Հողի «հասնայնացման» միջոցով նա ցանկանում է խափահարար պատենշներ կառուցել կապիտալիստական զարգացման հանդեպ և ապա՝ այդ ձևով էլ կռվել «աղքատության» դեմ: Խառաղանկով կապիտալիստական Արևմուտքի կարգերը՝ նա միաժամանակ կանգնած է մնում մասնավոր սեփականության պաշտպանների հիմնական դիրքերի վրա: Նալբանդյանը երգում է Ասիան, որպես «ժողովրդի մեծամասնությանը» սովից և «աղքատությունից» ապահովող մի վայր: Նվճարակազմի Ասիայում և՛ չկրկնվի Անգլիայի կամ Ֆրանսիայի «տխուր պատմությունը», նա առաջադրում է հողի համայնացման տարօրինակ իր ծրագիրը:

«Երկրագործության» ամենաթերի կողմերը, հենց այդ խորհրդածություններն են ապագայի մասին: Հակասական այդ խոհերն, անշուշտ, մանրբուրժուական մտավորականին հատուկ այն ներհակություններն են, որոնցից չի կարողացել ազատագրվել Նույնիսկ Նալբանդյանի նման խոշոր մտածողը:

Բայց այդ բոլորի հանդեպ անհամեմատ ավելի ուժեղ

* Տե՛ս «Դեմքեր և դեպքեր», Երևան, 1928, էջ 120—122:

են նալբանդյանի բնական նկատողություններն արևմտյան հասարակության սոցիալական ներհակությունների մասին:

Թե որքան հետևողական էր նալբանդյանը իր հենց այդ բնադատական վերաբերմունքի մեջ, երևում է նրա՝ բանտից գրված այն նամակներից, որոնք նվիրված են առանձնապես «հայասեր-միսիոնարներին» քաղաքականության գնահատմանը: Թուրքիայի միսիոնարները, նրա կարծիքով, ամենևին չեն տարբերվում Հնդկաստանում և Ճապոնիայում գործող միսիոնարներից: Նրանք «մեծամեծ ուճիկներ են ստանում և կանխիկ դրամով կամ անգլիական դեսպանության հովանավորությամբ գնված գավանափոխ անձերի թիվն ավելացնելով»՝ օժանդակ ուժ են հանդիսանում կապիտալիստական Արևմուտքի համար: «Ամբողջ խնդիրը, կարճ ասեմ,— ընդգծում է նալբանդյանը,— ահա՛ թե ինչ է. հայերը Տաճկաստանում ղուրկ են որևէ պաշտպանությունից: Անգլիական ու ֆրանսիական կառավարություններն իրենց օգտին են ծառայեցնում այդ հանգամանքը: Նրանք փաշաների բռնություններից իրենց պաշտպանի տակ են առնում քրիստոնյաներին»...

Եթե այդ կտրուկ բնութագրմանն ավելացնենք նալբանդյանի սենատական հանձնաժողովին տված հայտարարությունը՝ անգլիական կառավարությանն սպասավորող հայ քաղաքագետներից մեկի մասին, մենք կստանանք 60—ական թվականների մարտնչող հրապարակախոսի հայեցողության բավական լրիվ բնորոշումը:

Այդ նույն թվականներին արտասահմանում գործել է

* «Ն. նալբանդյանի բանտից գրած նամակները» («Նորք», 1924, № 4, էջ 174—175)։

որպես «Հայ ժողովրդի ազատագրման» ջատագով, ոմն Լուսինյան:

Այդ «Լուսինյան-գուբեր» բաղձաթիվ այն լուսինյաններից մեկն է եղել, որոնք հանդես են եկել մի կողմից՝ որպես հայ առևտրական կապիտալի, և ապա, մյուս կողմից էլ՝ որպես կապիտալիստական դիվանագիտության սպասավորներ մոտավոր Արևելքում: Դրանք ճգնել են օգտագործել Թուրքիայում փոքրամասնություն կազմող հայ բնակչության որոշ շերտերի անբավականությունը և հող պատրաստել արևմտյան կապիտալի արշավի համար:

